Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Крутюн» (образование) еженедельник 21.09.2022թ. չորեքշաբթի թիվ 39 (1064)

Անկախությունը բացարձակ արժեք է

Մեր հնամյան դարձավ 31 տարեկան

Աստեղային ժամ

Աստեղային ժամերը երբեք անհետեւանք չեն լինում: Հայ ժողովրդի աստեղային ժամերից էր 1991թ. **Սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեն**:

Պատմությունը կրկնվում է: Եվ ազգային քաղաքականության իմաստությունը պարփակված է *անցյալից դասեր քաղելու, անցյալի սխալներից խույս տալու ճկունության մեջ:*

1915թ. **Մեծ եղեռնից** 3 տարի անց, 1918թ. **Սարդարապատի** հերոսամարտով վերականգնվեց հայոց անկախությունը: Ռուսաստանում քաղաքացիական պատերազմ էր, *վելիկոռուսական կայսերապաշտությունը ժամանակ եւ հնարավորություններ չուներ «զբաղվելու» Հայաստանով*: 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը կարողացավ հաղթահարել սովը, համաճարակները, պատերազմի հետեւանքները, տնտեսական ճգնաժամը... Երկրի սահմաններն ընդարձակվեցին՝ ընդգրկելով գրեթե ողջ Արեւելյան Հայաստանը (շուրջ 70 հազար քառակուսի կիլոմետր տարածքով): Միջազգային դիվանագիտական մարզում եւս երկիրը հասավ մեծ հաջողությունների՝ ընդհուպ մերձենալով **Հայկական հարցի** լուծմանը՝ **Սեւրի** դաշնագրի կնքումով, Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով...

1988թ. **Մեծ երկրաշարժից** 3 տարի անց, 1991 թ. **Սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեի** փայլուն արդյունքով հռչակվեց Հայաստանի Հանրապետության վերածնունդը: Այդ օրը մենք, հիրավի ազգովի, միաձայն, ***«Այո»*** ասացինք մեր անկախությանը եւ **Անկախության հանրաքվեի** փայլուն արդյունքով **Հայաստանը հռչակեցինք՝ որպես ազատ, անկախ, ինքնիշխան պետություն**... Այնպես, ինչպես **1918**-ին, ինչպես դարեր առաջ, ինչպես մեր հազարամյա պատմության նախորդ աստեղային ժամերին: Մեզ առաջինը միացավ **Արցախը**: Հոգ չէ, թե՝ ոչ *«դե յուրե»*, կարեւորը *«դե ֆակտո»*-ն է: Հիշենք Խորենացուն՝ *«Սահմանք քաջաց՝ զենք յուրյանց»*: Այն, որ մենք քաջ ենք, ապացուցել ենք բոլոր ժամանակներում՝ արիականներից մինչեւ ապրիլյան օրեր, իսկ թե երբ կհասնենք մեր **իրական** սահմաններին, թերեւս միայն ժամանակի՛ խնդիր է. արդարությունը քնում, բայց չի մեռնում երբեք, մանավանդ որ **ազգային հիշողությունը** ոչ այնքան դասագրքերով, որքան գեներով՝ արյա՛մբ է փոխանցվում...

Իսկ մինչ այդ... Արեւելյան իմաստությունն ասում է. թե ուզում ես մեկին անիծել, մաղթիր, որ ապրի անցումային ժամանակներում: Ինչե՞ր ասես, որ չպատահեցին մեզ, ի՞նչ դավեր ու խարդավանքներ, ասես, որ, անակնկալ թե հերթական, չմատուցեցին մեզ մեր հեռու ու մոտիկ հարեւանները. շրջափակում, պատերազմ, ռազմական ու տնտեսական ուղղակի եւ անուղղակի հարվածներ... մինչեւ վերջին դավադիր պատերազմը, որ դեռ շարունակվում է... Մենք անցանք քավարանի միջով: Սակայն մեր դժվարությունները՝ **ժամանակավոր**, իսկ մեր ձեռքբերումները **հիմնական** էին: Այսօր՝ տարիների հեռավորությունից, երբ կշեռքի նժարին մեր մաքառումներին զուգահեռ մեր հաջողություններն ենք դնում, արձանագրում ենք՝ դեռեւս ունենք **պետություն**, **բանակ**, **եկեղեցի**, **դպրոց**... Եվ որեւէ ուժ, լինի դրսից, թե ներսից, չի կարող կործանել մեր հիմնայուները:

Այսուհետեւ, ինչ անակնկալներ էլ որ մատուցի մեզ մեր ճակատագիրը (իսկ հայերս միշտ մնում ենք լավատես), մի բան հստակ է. **մենք, գուցե ստիպված՝ նահանջելու, բայց երբեք չենք հանձնվելու, մեր անկախությունը փայփայելու, մեր երկիրը շենացնելու, քայլ առ քայլ հզորանալու ենք, մեր մեջքը շտկելու, ոտքի ենք կանգնելու, բարգավաճելու ենք ու մեր բոլոր խնդիրները, որքան էլ այսօր թվան հեռավոր կամ անիրատեսական, լուծելու ենք ժամանակի ընձեռած հնարավորությանը զուգահեռ, աստիճանաբար**... եւ մեր **երկիր Դրախտավայրին**, «*Նոր հայրենիք, հզոր հայրենիք*»-ին արժանանալու ենք հաստա՛տ:

Իսկ Սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեն մեր պատմության մեջ ընդմիշտ կմնա՝ որպես կարեւորագույն իրադարձություն, որպես **աստեղային ժամ**:

Գ.Մ.

ՀՀ Անվտանգության խորհրդի հայտարարությունը

19.09.2022

2022 թվականի սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ ագրեսիա են սկսել Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ՝ խոշոր տրամաչափի զինատեսակների, հրետանու, հրթիռային համակարգերի, անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ:

Ագրեսիայի հետեւանքով զոհվածների եւ անհետ կորածների թիվը հասնում է 207-ի, այդ թվում՝ զոհվել է քաղաքացիական 3 անձ, 2 քաղաքացիական անձի գտնվելու վայրը համարվում է անհայտ, վիրավորվել է 293 զինծառայող, 7 քաղաքացիական անձ, գերեվարվել է 20 զինծառայող: Առկա են ապացույցներ՝ հայաստանցի գերեվարված կամ զոհված զինծառայողներին ադրբեջանցիների կողմից խոշտանգումների ենթարկելու, անդամահատելու, այդպիսով ապօրինի կերպով կյանքից զրկելու դեպքերի վերաբերյալ:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից թիրախավորվել են 36 բնակավայրեր, այդ թվում՝ Գորիս, Սիսիան, Կապան, Ջերմուկ, Վարդենիս, Տեղ, Գեղամասար համայնքները, ինչի հետեւանքով մասնակի կամ ամբողջական ավերվել են 192 տուն, 3 հյուրանոց, 2 դպրոց, 1 բժշկական հաստատություն, 1 հանդիսությունների սրահ, 4 անասնագոմ: Վնասվել է 7 էլեկտրական ենթակառուցվածք, 5 ջրային ենթակառուցվածք, 3 գազամուղ, 1 կամուրջ, 2 ավտոճանապարհ, 1 փողոց: Թիրախավորվել են 2 շտապօգնության մեքենա, 4 անձնական օգտագործման ավտոմեքենա:

Ադրբեջանի զինված ուժերը մի քանի ուղղություններով մխրճվել են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք: Հայաստանի Զինված ուժերի համառ եւ հերոսական դիմադրության եւ միջազգային հանրության ներգրավման շնորհիվ Ադրբեջանի հարձակումը կասեցվել է, սակայն ռազմաքաղաքական իրադրությունը շարունակում է մնալ լարված:

Ադրբեջանի կողմից վարվող ագրեսիվ քաղաքականությունը տարածաշրջանում խաղաղություն հաստատելու, տարածաշրջանային կոմունիկացիաների բացման, ԼՂ հիմնախնդրի համապարփակ կարգավորմանն ուղղված ջանքերը վիժեցնելու եւ Հայաստանի Հանրապետությանն ուժային լուծումներ պարտադրելու նպատակ ունեն:

Հայաստանի Հանրապետությունը, որդեգրած լինելով խաղաղություն հաստատելու, տարածաշրջանային կոմունիկացիաների բացման օրակարգ, անընդունելի է համարում Ադրբեջանի կողմից վարվող սպառնալիքի եւ հարկադրանքի քաղաքականությունը:

Անվտանգության խորհուրդը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրեն հասու բոլոր միջոցներով պաշտպանելու է իր անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանական զորքերը պետք է դուրս գան ՀՀ օկուպացված տարածքներից:

Միջազգային հանրությանը կոչ ենք անում Ադրբեջանի վրա շարունակաբար ճնշումներ գործադրել՝ ՀՀ ինքնիշխան տարածքների օկուպացիային վերջ դնելու եւ զորքերը ետ քաշելու ուղղությամբ եւ ողջունում ենք բոլոր այն երկրներին եւ կազմակերպություններին, որոնք հանդես են եկել հստակ դիրքորոշմամբ:

Միեւնույն ժամանակ, վերահաստատում ենք միջազգային հանրության պատասխանատու անդամի պարտավորությանը հավատարիմ մնալու Հայաստանի Հանրապետության հանձնառությունը:

Կառավարություն

Լրացուցիչ հատկացումներ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ վերաբաշխում է կատարվել ԿԳՄՍ նախարարության 2022 թվականի բյուջեում. 146 մլն 413.9 հազար դրամ գումար է հատկացվել մի շարք կրթական, մշակութային եւ մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավմանը՝ *«Կապիտալ դրամաշնորհներ պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններին»* հոդվածով: Նախատեսվում է իրականացնել մի շարք հաստատությունների շինարարական, նախագծման եւ գույքային հագեցվածության ապահովման աշխատանքներ մասնավորապես.

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում եւ փորձաքննություն

«Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի տեղադրում:

Շինարարական աշխատանքներ

- *«Երեւանի N 9 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի պատուհանների եւ դռների փոխարինում,
- *«Ալ. Սպենդիարյանի անվանա օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն»* ՊՈԱԿ-ի տանիքի նորոգում,
- *«Երեւանի Բ.Ժամկոչյանի անվ. թիվ 119 ավագ դպրոց»* ՊՈԱԿ-ի արտաքին կոյուղու ցանցի կառուցում:

Գույքով ապահովում

- *«Մ. Խորենացու անվան թիվ 143 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ,
- *«Ալ. Սպենդիարյանի անվանա օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն»* ՊՈԱԿ,
- *«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն»* ՊՈԱԿ-ի ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մարում:

Կառավարության նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ 2023 թվականի ապրիլին Հայաստանում կայանալիք ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությանն ընդառաջ 24 մլն դրամ գումար է հատկացվելու ,Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոցի ,Կիլիկիաե մարզադաիլիճի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար:

Եվրոպայի առաջնության շրջանակում նախատեսվում է *«Կիլիկիա»* մարզադաիլիճը դարձնել ծանրամարտի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մարզումային դահլիճ:

Գումարը պետական բյուջեի պահուստային ֆոնդից կհատկացվի ՀՀ քաղաքաշինության կոմիտեին:

Նախատեսվում է կիրառել նախագծման աշխատանքների հետեւյալ ժամանակացույցը՝ ծավալատարածական էսքիզային լուծումներ եւ հատակագծերի հաստատում՝ 10 օր, *«Նախագիծ»* փուլի մշակում եւ փորձաքննություն՝ 40 օր, աշխատանքային փաստաթղթերի մշակում՝ շինարարության ընթացքին զուգահեռ՝ 40 օր: Նախագծումը եւ նախագծի փորձաքննությունն իրականացվելու են փուլային տարբերակով:

Հիմնանորոգման ենթակա մարզադահլիճի նախագծային լուծումները կներառեն հիմնական պահանջներ օբյեկտի սեյսմակայունության, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, ներքին հաղորդակցման ուղիների (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջեռուցման), օդափոխության, օդորակման, տեսահսկման համակարգերի կառուցման կամ հիմնանորոգման, տարածքի բարեկարգման, գոյություն ունեցող շենքի եւ շինության հատակագծային լուծումների արդիականացման ու միջազգային չափանիշներին համապատասխան բարձրորակ հարդարման միջոցառումներ եւ այլն:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Պաշտոնական

Նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենին

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** պաշտոնական նամակ է հղել Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) գլխավոր տնօրեն **Օդրի Ազուլեին՝** ներկայացնելով 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական ագրեսիան Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա եւ դրա հետեւանքները:

Նամակում նշվել է, որ ագրեսիայի ընթացքում ադրբեջանական զինուժի թիրախ են դարձել ոչ միայն ռազմական դիրքերը, այլեւ քաղաքացիական ենթակառուցվածքները: Մասնավորապես, Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հավաքագրված տվյալների համաձայն՝ Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերից տեղահանվել է առնվազն 7600 հոգի: Տեղահանվածների ճնշող մեծամասնությունը կանայք, երեխաներ եւ տարեցներ են, որոնց թվում՝ նաեւ հաշմանդամություն ունեցող անձինք:

Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի հետեւանքով ընդհատվել է ուսումնական գործընթացը հանրակրթական ու նախադպրոցական հաստատություններում՝ պայմանավորված երեխաների եւ աշխատակիցների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Արդյունքում Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի 172 դպրոցներում սովորող 24.873 դպրոցական եւ 69 մանկապարտեզների 5.808 նախադպրոցական տարիքի երեխաներ զրկվել են կրթության եւ բարեկեցիկ ապագայի իրավունքից: Վտանգված է նաեւ այդ մարզերում գործող արտադպրոցական ուսումնական հաստատությունների, քոլեջների եւ բուհերի գործունեությունը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ սովորողների, ուսուցիչների եւ հաստատությունների թիրախավորումը միջազգային մարդասիրական իրավունքի եւ կրթության իրավունքի կոպտագույն խախտումն անընդունելի է ցանկացած պարագայում եւ պետք է խստորեն դատապարտվի:

Նամակով ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը դիմել է Օդրի Ազուլեին՝ խնդրելով արձագանքել ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետեւանքով առաջացած ծանր սպառնալիքին եւ դատապարտել Ադրբեջանի նմանօրինակ թշնամական գործողությունները՝ այդպիսով նպաստելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի մանդատի հիմնարար սկզբունքների հետագա խախտումների կանխարգելմանը եւ կրթության իրավունքի, բռնի տեղահանված բնակչության իրավունքների, ռազմական գործողությունների ընթացքում քաղաքացիական բնակչության եւ քաղաքացիական ենթակառուցվածքների պաշտպանության իրավունքների ապահովմանը:

Նամակին կցվել է նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից պատրաստված հատուկ զեկույցը:

Ասուլիս

Խախտվել է շուրջ 25.000 դպրոցականի եւ 6.000 նախադպրոցական տարիքի երեխայի կրթության իրավունքը

«Արմենպրես» լրատվական գործակալությունում հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** ներկայացրել է ՀՀ տարածքի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի հետեւանքով կրթության իրավունքի խախտման եւ ներկայում ուսումնական գործընթացի կազմակերպման մանրամասները:

Փոխնախարարը տեղեկացրել է, որ ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի որոշ բնակավայրերում անվտանգային լուրջ խնդիրների հետեւանքով հազարավոր երեխաներ զրկվել են կրթության շարունակականության ապահովման հնարավորությունից: Նրա խոսքով՝ ընդհատվել է շուրջ 25.000 դպրոցահասակ եւ ավելի քան 6.000 նախադպրոցական տարիքի երեխաների կրթության իրավունքը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակն ու անվտանգության ապահովման խնդիրը՝ ԿԳՄՍ նախարարության որոշմամբ Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի 172 դպրոցներին նախորդ շաբաթ տրամադրվել է հարկադրված արձակուրդ՝ հետագայում բաց թողնված դասաժամերը լրացնելու պայմանով: Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախորդ շաբաթ այս բնակավայրերի ուսհաստատությունները չեն գործել, սակայն այսօրվանից ուսումնական գործընթացը վերականգնվել է:

«Մենք հետեւել ենք գործընթացին եւ մեր գործընկերների հետ կապի մեջ լինելով՝ որոշել ենք, որ երեք մարզերի դպրոցներն երկուշաբթի օրվանից կվերականգնեն իրենց աշխատանքները: Այն դպրոցներում, որտեղ անվտանգության ապահովման տեսանկյունից կա համապատասխան հնարավորություն, դասապրոցեսը կկազմակերպվի առկա եղանակով, իսկ այն բնակավայրերում, որտեղ մի շարք հանգամանքներ հաշվի առնելով՝ առկա ուսուցման հնարավոր չէ վերադառնալ, կրթությունը կիրականացվի հեռավար ձեւաչափով»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ Գեղարքունիքի մարզում հեռավար ուսուցմամբ կրթությունը կվերսկսի 12 դպրոց (հիմնականում՝ Վարդենիսի տարածաշրջանում), իսկ Վայոց

ձորում՝ 3 դպրոց. մնացած դպրոցներում դասերը կընթանան բնականոն հունով՝ առկա ձեւաչափով: Սյունիքի մ*արզում առկա ուսուցման կանցնի 5 դպրոց. մնացած դպրոցներում դասերը կլինեն հեռավար:*

«Ցավոք, ոչ միայն համավարակի հետեւանքով մեր դպրոցները կուտակել են հեռավար կրթության փորձառություն. ապրիլյան պատերազմի հենց առաջին օրերից սահմանամերձ համայնքների դպրոցներն անցում էին կատարել հեռավար կրթության, որի ընթացքում ուսհաստատություններն ապահովվել էին անհրաժեշտ սարքավորումներով: Այս պահին դպրոցների կարողությունները բավարար են, սակայն մենք խնդիր ունենք օր առաջ վերադառնալ առկա ուսուցման՝ իհարկե, առաջին հերթին հաշվի առնելով անվտանգային իրավիճակը»,- շեշտել է նախարարի տեղակալը:

Նրա խոսքով՝ ժամանակավոր տեղահանված ընտանիքների դպրոցահասակ երեխաների ուսուցումն այս միջանկյալ ժամանակահատվածում կիրականացվի հեռավար՝ այդ ընտանիքներին մեծ անհարմարություն չպատճառելու նպատակով: Ժաննա Անդրեասյանը նաեւ տեղեկացրել է, որ Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի վերոնշյալ բնակավայրերում նախադպրոցական հաստատությունները հիմնականում չեն գործում. Սյունիքի մարզի շատ բնակավայրերում դրանք աշխատում են:

Նախարարի տեղակալը մանրամասնել է, թե ինչու է որոշում կայացվել այլեւս չերկարաձգել արձակուրդը, այլ անցնել հեռավար ուսուցման. *«Սա հետագայում խնդիրներ է առաջացնում երեխաների ծանրաբեռնվածության եւ դպրոցի աշխատանքների կազմակերպման առումով, սակայն այս օրերին դպրոց գնալը կարեւոր է նաեւ երեխաների սոցիալական հաղորդակցման, հոգեբանական աջակցության եւ սթրեսային իրավիճակի հաղթահարման տեսանկյունից: Դպրոցները շատ կարեւոր գործառույթ են իրականացնում ամբողջ երկրում, որովհետեւ երեխաներն ունեն բազում հարցեր, դրանց պատասխաններն իրենց տարեկիցների եւ ուսուցիչների հետ քննարկելու եւ շփվելու կարիք»,-* նշել է փոխնախարարը:

Նա նաեւ տեղեկացրել է, որ դեռեւս 2020 թվականի պատերազմից հետո գործընկերների աջակցությամբ բոլոր դպրոցների ուսուցիչներն անցել են վերապատրաստման ծրագիր՝ երեխաներին հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Բացի դրանից, ըստ Ժաննա Անդրեասյանի, բոլոր մարզերում գործում են մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, որոնք անհրաժեշտության դեպքում կցուցաբերեն համապատասխան օգնություն. *«Մենք խիստ կարեւորում ենք հոգեբանի աշխատանքը, այդ նպատակով ֆինանսավորման նոր կարգով բոլոր դպրոցներում այս հաստիքը պարտադիր ենք դարձրել»:*

Նախարարի տեղակալի փոխանցմամբ՝ Ադրբեջանի լայնածավալ ագրեսիայի հետեւանքով Գեղարքունիքի մարզի երկու համայնքների՝ Սոթքի եւ Այրքի դպրոցների շենքերը վնասվել են. *«Բնականաբար, շատ արագ կիրականացվեն անհրաժեշտ աշխատանքներ՝ պատճառված վնասի վերացման ուղղությամբ, սակայն խիստ մտահոգիչ է, որ թիրախավորվել են ուսումնական հաստատություններ, ինչն անթույլատրելի է եւ միջազգային իրավունքի տեսանկյունից բոլոր նորմերի ու կոնվենցիաների խախտում է»,-* փաստել է փոխնախարարը՝ ընդգծելով, որ այս տվյալները ԱԳՆ-ի միջոցով փոխանցվել են միջազգային կառույցներին:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Նախարարն ընդունել է ՌԴ պատվիրակությանը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** այսօր ընդունել է Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ միջազգային մշակութային համագործակցության հարցերով հատուկ ներկայացուցիչ **Միխայիլ Շվիդկոյին** եւ ՌԴ նախագահի աշխատակազմի օտարերկրյա պետությունների հետ միջտարածաշրջանային եւ մշակութային կապերի վարչության պետ **Իգոր Մասլովին:**

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արթուր Մարտիրոսյանը** եւ **Արա Խզմալյանը:**

Ողջունելով պատվիրակության այցը ԿԳՄՍ նախարարություն՝ Վահրամ Դումանյանն անդրադարձել է *«Հայաստանի մշակույթի օրեր Ռուսաստանում»* եւ *«Ռուսաստանի հոգեւոր մշակույթի օրեր Հայաստանում»* ծրագրերին: Նշվել է, որ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի շրջանակում 2022 թ. հունիսի 10-13-ը Ռուսաստանում անցկացվել են Հայաստանի մշակույթի օրեր: Միջոցառումները կայացել են Մոսկվայում եւ Կիսլովոդսկում: Մշակույթի օրերի շրջանակում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը եւ Կոմիտասի անվան ազգային քառյակը հանդես են եկել համերգներով: *«Ռուսաստանի հոգեւոր մշակույթի օրեր Հայաստանում»* ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022 թ. հոկտեմբերի 6-7-ը:

Կողմերն անդրադարձել են նաեւ կինոյի ոլորտում երկու երկրների միջեւ համագործակցությանը: Ռուսական կողմը պատրաստակամություն է հայտնել հայ կինոյի 100-ամյա հոբելյանի շրջանակում, որը նախատեսվում է 2023 թվականին եւ ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների օրացույցում, աջակցել ԽՍՀՄ տարիներին նկարահանված եւ ներկայում ՌԴ կինոֆիլմերի պետական ֆոնդի արխիվում պահվող հայկական ֆիլմերի թվայնացման կազմակերպման գործում:

Առաջարկվել է նաեւ դիտարկել հոբելյանական միջոցառումների շրջանակում *«Իլլուզիոն»* կինոթատրոնում *«Հայֆիլմ»* կինոստուդիայի արտադրության ֆիլմերի համատեղ ցուցադրություն կազմակերպելու հնարավորությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Մարզական

Փառահեղ հաղթանակ

Ռումինիայի Մամայա քաղաքում օրերս ավարտվել է շախմատի մինչեւ 14, 16 եւ 18 տարեկանների աշխարհի առաջնությունը: Հայաստանի ներկայացուցիչներից լավագույնս հանդես է եկել Հայաստանի գործող չեմպիոնուհի Մարիամ Մկրտչյանը, որը Մ18 տարեկանների պայքարում հաղթել է բոլոր 11 պարտիաներում եւ նվաճել աշխարհի չեմպիոնի կոչումը:

Հայ շախմատիստուհին խոստովանում է՝ իր համար անսպասելի էր բացարձակ արդյունքով աշխարհի Մ18 տարեկանների չեմպիոնի կոչումը նվաճելը. *«Երբ մեկնում էի աշխարհի առաջնության, ընդհանրապես չէի մտածում արդյունքի մասին: Չէի մտածում՝ արդյոք կկարողանա՞մ չեմպիոն դառնալ, թե՝ ոչ .... մտածում էի միայն այն մասին, որ պետք է լավագույնս հանդես գալ եւ առավելագույն միավորներ վաստակել: Տեղում արդեն մտածում էի միայն հաջորդ պարտիայի մասին եւ այնպես էր ստացվում, որ տուրից տուր հաղթում էի: Զգում էի, որ իմ հանդեպ վերաբերմունքն էլ փոխվել է, դահլիճում արդեն ավելի ուշադիր էին լինում իմ պարտիաներին, նայում էին, թե ինչպես էի խաղում, քանի որ 1957 թվականից ի վեր ոչ-ոքի չէր հաջողվել 11 անընդմեջ հաղթանակ տանել այս առաջնությունում: Այնպես որ, ինձ համար եւս արդյունքը շոկային էր»:*

Մարիամ Մկրտչյանն ասում է՝ բոլոր 11 պարտիաներն էլ հետաքրքիր են ստացվել, իսկ մրցակցությունը բավական բարդ է եղել. *«Շատ ուրախ եւ հպարտ եմ, որ կարողացա հաղթահարել բոլոր դժվարություններն ու հաղթող ճանաչվել աշխարհի Մ18 տարեկանների առաջնությունում: Ընդհանուր առմամբ բոլոր պարտիաներն էլ հետաքրքիր էին, իսկ յուրաքանչյուր հաղթանակով ավելի էի մոտենում չեմպիոնությանը: Մրցակցությունն իսկապես մեծ էր, մրցակիցներս ավելի փորձառու էին եւ նրանք էլ էին պայքարում մրցանակային տեղերի համար, այնպես որ բարդ էր: Նախկինում պատանեկան մրցաշարերի մասնակցության փորձ ունեի, սակայն վերջին տարիներին միշտ մի փոքր խանգարում էր եւ չէի կարողանում մրցանակային տեղ զբաղեցնել»:*

Մարիամ Մկրտչյանի խոսքով՝ աշխարհի պատանեկան առաջնությունում ամենազգացմունքային պարտիան անցկացրել է Ադրբեջանի ներկայացուցչի դեմ սեպտեմբերի 13-ին, երբ իմացել է ՀՀ տարածքի ուղղությամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի մասին. *«Հետեւում էինք այն ամենին, ինչ կատարվում էր մեր հայրենիքում: Հենց հաջորդ օրը պետք է մրցեի Ադրբեջանի ներկայացուցչի հետ: Հոգեբանորեն շատ ծանր էր խաղին պատրաստվելը, որպեսզի այդ լարվածությունն ու մտքերը չխանգարեն ինձ հենց տախտակի առջեւ»:*

Մարիամ Մկրտչյանն աշխարհի առաջնությունում տարած այս հաղթանակը նվիրում է ՀՀ սահմանը պահող զինվորներին:

Մարիամ Մկրտչյանն այս տարվա հունվարին է ընդգրկվել Հայաստանի կանանց հավաքականի կազմում, երբ նվաճել է Հայաստանի չեմպիոնությունը: Ասում է՝ հավաքականի գլխավոր մարզիչ Զավեն Անդրեասյանի հետ փետրվարից սկսել են մարզումներն ու նախապատրաստական շրջանը. *«Բավական լուրջ աշխատանքներ ենք տարել՝ շեշտը դնելով հիմնականում սկզբնախաղերի եւ խաղային որակները բարելավելու վրա: Վերջին մրցաշարերում արդեն երեւում էին այդ փոփոխությունները, ես կիրառում էի մեր նախապատրաստած նորույթներն ու շատ ուրախ եմ, որ ստացվեց լավ հանդես գալ»:*

Նշենք՝ հոկտեմբերի 11-ից Մարիամ Մկրտչյանն Իտալիայում մասնակցելու է մինչեւ 20 տարեկանների աշխարհի անհատական առաջնությանը: Ասում է՝ պետք է շարունակի պատրաստվել եւ լավագույնս հանդես գալ այդ ստուգատեսում:

Ռումինիայի Մամայա քաղաքում անցկացված շախմատի մինչեւ 14, 16 եւ 18 տարեկանների աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչներից եւս երկուսը վերջին տուրից առաջ հավակնում էին մրցանակային տեղերի, սակայն անմասն մնացին մեդալներից: Մինչեւ 16 տարեկան պատանիների մրցաշարում Էմին Օհանյանը վերջին տուրում պարտվել է Իսպանիայի ներկայացուցչին եւ 7,5 միավորով զբաղեցրել է 8-րդ հորիզոնականը:

Տարիքային նույն խմբում Արսեն Դավթյանն առավելության է հասել ղազախ Բեկսուլթան Մոլդաղալիի նկատմամբ եւ 7,5 միավորով գրավել է 9-րդ տեղը: Ալեքս Սահակյանն էլ հաղթել է Հյուսիսային Մակեդոնիայի ներկայացուցիչ Անտոն Զլատկովին ու վաստակած 7 միավորով գրավեց 18-րդ տեղը:

Մեդալի էր հավակնում նաեւ մինչեւ 18 տարեկան պատանիների մրցաշարի մասնակից Մամիկոն Ղարիբյանը, սակայն վերջին տուրում պարտվել է եւ 7,5 միավորով զբաղեցրել է 6-րդ տեղը:

Հայաստանն աշխարհի պատանեկան առաջնությանը մասնակցել է 12 մարզիկով:

Բուհ

Փոփոխություն քննությունների ցանկում

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2023/2024 ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ **Լուսինե Գրիգորյանի** տեղեկացմամբ՝ բուհերի այս տարվա մասնագիտությունների ցանկում կան նորություններ՝ պայմանավորված հանրակրթության ոլորտի բարեփոխումներով:

Մասնավորապես՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական եւ Խ. Աբովյանի պետական մանկավարժական համալսարաններում կազմակերպվելու են բարձրագույն կրթության նոր ծրագրեր՝ մանկավարժի որակավորմամբ: Նախատեսվում է շնորհել միանգամից երկու առարկայի ուսուցչի որակավորում՝ հետեւյալ կրթական ծրագրերով՝ *«Կենսաբանություն-քիմիա»*, *«Աշխարհագրություն-բնագիտություն»*, ինչպես նաեւ *«Անգլերեն, գերմաներեն եւ գրականություն»*, *«Անգլերեն, ֆրանսերեն եւ գրականություն»*, *«Անգլերեն, ռուսերեն եւ գրականություն»*, *«Չինարեն եւ գրականություն»*, *«Ռուսերեն, գերմաներեն եւ գրականություն»*, *Ռուսերեն, ֆրանսերեն եւ գրականություն»:*

Գիտելիքների ստուգման գործընթացն իրականացվում է միասնական մոտեցմամբ. անկախ բուհի կարգավիճակից՝ պետական եւ ոչ պետական հաստատությունների բոլոր դիմորդները հանձնում են ընդունելության առնվազն 2 քննություն: Կան մասնագիտություններ, որոնց համար սահմանվել են կամընտրական քննություններ՝ դիմորդներին հնարավորություն տալով իրենց ցանկությամբ ընտրել քննական առարկան:

Ըստ ընդունված որոշման՝ կանոնակարգվել են բուհերում նույն մասնագիտության (կրթական ծրագրի) համար ընդունելության միասնական չափանիշների սահմանումը եւ մուտքային պահանջների համապատասխանությունը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ մասնագիտության համար շրջանավարտին շնորհվող համապատասխան որակավորումը:

Ըստ այդմ՝ նույն մասնագիտության դիմորդները պետք է հանձնեն ընդունելության նույն քննությունները՝ անկախ ընտրած բուհից:

Լուսինե Գրիգորյանը նաեւ նշում է, որ, ավանդաբար, քննությունների եւ մասնագիտությունների ցանկն հաստատվել է նոյեմբերի վերջին տասնօրյակում: Սակայն այս տարի ավելի վաղ է հաստատվել, հաշվի առնելով, որ այս տարվանից սկսած դիմորդները ընդունելության միասնական քննությունները կարող են հայտագրել եւ հանձնել 2 անգամ:

Առաջին փուլում դիմումների հայտագրումն կիրականացվի 2022 թ. դեկտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 25-ը, իսկ քննությունները կանցկացվեն հաջորդ տարվա հունվար-փետրվար ամիսներին (հունվարի 15-ից մինչեւ փետրվարի 15-ը):

Երկրորդ փուլի հայտերն ընդունվելու են 2023 թվականի ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը, իսկ քննությունները կանցկացվեն հունիսի 1-ից հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նախագիծ

Եկամտահարկի փոխհատուցման ընդլայնում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով առաջարկվում է փոփոխություններ կատարել մագիստրատուրայի, ասպիրանտուրայի եւ օրդինատուրայի այն մասնագիտությունների ցանկում, որոնցից որեւէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի աշխատավարձի եւ դրան հավասարեցված վճարումների մասով հաշվարկված եկամտային հարկն ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է:

Կարգավորման նպատակն է՝ խթանել սովորողների ուսուցումը՝ հաշվի առնելով աշխատաշուկայում առկա մասնագետների պահանջարկը, ինչպես նաեւ պետության համար առաջնահերթություն ներկայացնող ոլորտներն ու մասնագիտությունները: Վերոնշյալով պայմանավորված՝ առաջարկվում է վերանայել ՀՀ կառավարության որոշման մեջ ներառված շուրջ 100 մասնագիտությունների ցանկը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վերոհիշյալ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրությունն աճել է՝ բացառությամբ որոշ (շուրջ 20) մասնագիտությունների, ինչը արտահայտվել է տվյալ մասնագիտություններով բուհերում սովորող ուսանողների քանակի աճով:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաեւ, որ աշխատաշուկայում կան մի շարք մասնագիտություններ, որոնց գրավչությունը բարձրացնելու խնդիր է առաջացել՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը՝ մասնավորապես այն, որ գյուղատնտեսության ոլորտն ունի բարձր պահանջարկ, սակայն չկան բավարար մասնագետներ:

Այսպես՝ մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող մասնագիտությունների գործող ցանկին ավելացել է 11 մասնագիտություն, որոնց ներառումը առաջարկվել է համապատասխան գերատեսչությունների կողմից՝ ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Նախագծով ներկայացված մասնագիտությունները ներառվել են *«Բնական գիտություններ, մաթեմատիկա եւ վիճակագրություն»*, *«Ճարտարագիտություն, արդյունաբերություն եւ շինարարություն»*, *«Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն եւ անասնաբուժություն»* եւ *«Ծառայություններ (սերվիս)»* ոլորտներից:

«Բնական գիտություններ, մաթեմատիկա եւ վիճակագրություն» ոլորտը լրացվել է *«Գեոմատիկա»* մասնագիտությամբ: Մասնագիտության գրավչության բարձրացումը մեծ նշանակություն կունենա ուժային կառույցների, Կադաստրի եւ Քաղաքաշինության կոմիտեների, պետական գույքի կառավարման նախագծային, խորհրդատվական եւ շինարարական ընկերությունների համար: ՀՀ Կառավարության 2021-2026 թթ-ի գործունեության ծրագրի համապատասխան կետով նախատեսված ազգային տարածական տվյալների միասնական ենթակառուցվածքի ստեղծման եւ այն կառավարման գործընթացում ներդրման համար *«Գեոմատիկա»* մասնագիտության շրջանավարտները տարբեր ոլորտներում կարող են ապահովել նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացումը:

«Ճարտարագիտություն, արդյունաբերություն եւ շինարարություն» եւ *«Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն եւ անասնաբուժություն»* ոլորտներում կատարված լրացումները պայմանավորված են գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների առկա խնդիրներով: Այդ նպատակով մասնագիտությունների ցանկում ներառվել են նաեւ *«Ավտոմեքենաներ եւ տրակտորներ»*, *«Բուսական եւ կենդանական ծագման մթերքների վերամշակման եւ արտադրության տեխնոլոգիա»* եւ *«Բուսաբուծության, խաղողագործություն, պտղաբուծություն եւ բույսերի պաշտպանություն»* մասնագիտությունները:

«Ծառայություններ (Սերվիս)» ոլորտում ավելացվել է *«Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում»* մասնագիտությունը, որի ներառումը պայմանավորված է ճգնաժամերի կանխման, կանխարգելման եւ դրանց ծագման դեպքում հետեւանքների վերացման, փրկարարական աշխատանքների կազմակերպման ու կառավարման, պատերազմի հետեւանքներից բնակչության պատպանության արդյունավետ իրականացման գործընթացների կարեւորությամբ:

Մասնագիտությունների ցանկից նաեւ հանվել են որոշ մասնագիտություններ՝ հաշվի առնելով գերատեսչությունների կողմից ներկայացված կարծիքը՝ հաշվի առնելով աշխատաշուկայում տվյալ մասնագիտություններով պահանջարկ

Նշենք, որ նախագիծը կազմվել է՝ հաշվի առնելով շահագրգիռ գերատեսչություններից ստացված առաջարկությունները, ինչպես նաեւ բուհերի կողմից ստացված տեղեկատվությունը՝ ըստ մասնագիտությունների բուհում սովորողների քանակի վերաբերյալ:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախադպրոցական

Չափորոշիչը կփորձարկվի 60 հաստատությունում

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի հրամանով՝ հաստատվել է 60 նախադպրոցական ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ 2022-2023 ուսումնական տարում կիրականացվեն նախադպրոցական կրթական համալիր ծրագրերի փորձարկումը, որոնք մշակվել են ըստ նախադպրոցական նոր չափորշչի:

Նշենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, որով սահմանվում են երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, կրթական ծրագրերի բովանդակությունը, երեխաներին ներկայացվող որակական պահանջները, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության եւ զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմնված մոտեցումն է, որը ներառում է ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները եւ դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները, երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը, երեխաների զարգացման ընթացքի եւ առաջադիմության մակարդակի դիտարկման ձեւերը:

Համաձայն *«Նախադպրոցական կրթության մասին»* ՀՀ օրենքի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող մասնագետները պետք է շարունակական վերապատրաստումներ անցնեն:

Այդ նպատակով Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն հիմնադրամի կողմից մշակվել են նաեւ վերանայված ծրագրերին համապատասխան վերապատրաստումների մոդուլներ: Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար նշված մոդուլներով 2022 թ. օգոստոսին կազմակերպվել են վերապատրաստումներ:

Նոր չափորոշիչը միտված է նրան, որ կանոնակարգված քաղաքականություն իրականացվի նախադպրոցական եւ հանրակրթական ծառայությունների որակի ու արդյունավետության համեմատական գնահատման, ինչպես նաեւ երեխաների, ծնողների, մանկավարժական աշխատողների, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային մարմինների, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների իրազեկվածության բարձրացման ուղղություններով:

Չափորոշիչը հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում արձագանքելու երեխաների կարիքներին եւ հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը: Մասնավորապես՝ տրված է, թե նախադպրոցական կրթության ավարտին երեխաները ինչ պետք է իմանան, կարողանան անել եւ հասկանալ:

Սահմանված են հետեւյալ կարողունակությունները.

Լեզվական եւ հաղորդակցական,
Ճանաչողական եւ մոտիվացիոն,
Ինքնաճանաչողական եւ սոցիալական,
Ժողովրդավարական եւ քաղաքացիական,
Թվային եւ մեդիա,
Մշակութային,
Մաթեմատիկական եւ տեխնիկական,
Տնտեսական,
Ֆիզիկական կրթության եւ առողջ ապրելակերպի:

Վերջնարդյունքներ եւ կրթության բովանդակություն

Չափորոշչով սահմանված են նաեւ երեխաների զարգացման եւ կրթական վերջնարդյունքներ, նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը, որոնք ներառում են շարժողական, խոսքի եւ հաղորդակցման, հուզական, սոցիալ-անձնային, իմացական, ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտները: Տրված են նաեւ խմբասենյակների ձեւավորման հիմնական պահանջները՝ մասնավորապես, թե ինչ սարքավորումներ եւ խաղալիքներ ու նյութեր պետք է ապահովվեն երեխայի ներդաշնակ զարգացման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու նյութերը պետք է համապատասխանեն երեխայի տարիքին եւ սահմանված առողջապահական նորմերին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գրականագիտական

Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

1920, 1 հունվար – *«Յառաջ»*-ը (թիվ 1) *««Լյուսի Թառայանին» գրքից»* խորագրով տպագրում է *«Իմ անցած օրերի պես»* բանաստեղծությունը:

1920, 7 հունվար – Օրեր շարունակ տեւած հյուծիչ հիվանդությունից՝ թոքախտից հետո 35 տարեկան հասակում Օրենբուրգում վախճանվում է նորագույն շրջանի հայ գեղարվեստական մտածողության առաջնորդը՝ Վահան Տերյանը, նա, ում ստեղծագործությամբ հայ գրականությունը թեւակոխում է մի նոր դարաշրջան: Նրան հուղարկավորում են Օրենբուրգի գերեզմանոցի հայկական մասում:

Վահան Տերյանի մահը հայկական միջավայրում իմացվում է երկու ամիս անց: Գույժը հայտնում է *«Մշակ»*-ը:

Խորեն Ռադիո. «Մեր հանգուցյալ Տերյանը եւ հրաշալի բոլշեւիկ էր, եւ ВЦИК-ի անդամ, եւ աշխատել է Ստալինի հետ, եւ նման այլ բաներ: Բայց ի՞նչն է նրա մեջ բոլշեւիկյան, եւ արդյո՞ք պետք է դա՝ պահանջել նրանից: Ո՛չ: Բավական է, որ նա հրաշալի բանաստեղծ է <...>: Դա՛ է գլխավորը» «Հայոց լեզու եւ գրականություն», 2017, թիվ 5, էջ 51):

1920, 15 հունվար – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 1) Դ. Անանունը հանդես է գալիս *«Ստի հարատեւությունը» հոդվածով. «Այժմ մեր գրականության մեջ սովորություն է դարձել մեծարել «հին աստվածներին», այս բառի իսկական իմաստով: Մեկը կառուցում է Վահագնի բագինը, մյուսը՝ Անահիտի, երրորդը՝ Աստղկա: Կամենում է մեր գրողը ուժի հասկացությունը մեծարել: <...>: Ջերմոցային գրականությունից պետք է անցնել միս ու ոսկոր պարունակող, իրականության շնչով թաթախված գրականության: <...>: Պետք է թողնել Վահագնին ու Աստղկան եւ վերադառնալ հայ մարդու օթեւանը եւ այստեղ լցվել արվեստագետի շնորհքով: Դա՛ծ դեպի ճշմարտությունը: Սակայն ո՞րն է մեր կյանքի ճշմարտությունը»* (շարունակությունը՝ թիվ 2, 31 հունվար):

Նկատի ունի Շանթին, Վարուժանին, Յարճանյանին: Այս մտայնությամբ եւ հակառակ Անանունի քննադատության, տարվա ընթացքում Չարենցը գրում է *«Աստղիկ»* բանաստեղծությունը եւ նույն թվականին տպագրում նույն *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 17, սեպտեմբերի 15): *«Աստղիկ»*-ը հեթանոսական դարձի արձագանք էր:

1920, 15 հունվար – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 1) տպագրում է *««Լյուսի Թառայանին» գրքից»* խորագրով բանաստեղծություններ՝ *«Օրերը հուր են հիմա», «Նոր է կարոտս հիմա»:* 1922-ին զետեղել է *«Ողջակիզվող կրակ»* շարքի *«Առավոտ»* ենթաշարքում:

1920, 15 հունվար – Կարսում գրում է *«Օրիորդ Աշխենին»* բանաստեղծությունը: Աշխեն Թաթուլյան-Իսահակյանը՝ ծնված 1900 թ., որպես գանձապահ աշխատել է Կարսում՝ Զատիկյանին պատկանող *«Բաժակ թեյ»* պանդոկում: Հիշում է՝ Չարենցը հաճախակի է այցելել, առանձնացել ու գրել: Մտերմացել են: Հենց պանդոկում էլ գրել ու նրան է հանձնել հիշյալ բանաստեղծությունը. *«Աշխենի ասելով՝ Չարենցը շատ աղքատ էր ապրում, միշտ կարիքի մեջ, «հագին կանոնավոր շոր չկար»»* (ԳԱԹ, ՁՖ, 232): Ըստ Վ. Պարսամյանի՝ այդ բանաստեղծությունն ինքը գրի է առել՝ Աշխենից լսելով, ինքնագիրը չկա (տպագրել է ԳԹ, 1956, թիվ 18), իսկ Աշխենին Չարենցի մակագրած գրքերը՝ *«Բանաստեղծություններ: Օիաձանը» («Անկեղծ հարգանքով օր. Աշխենին») եւ «Ամբոխները խելագարված»* (*«Հարգելի օրիորդ Աշխենին, Եղիշե Չարենցից»*), նվիրել է ԳԱԹ-ին:

1920, 26 հունվար – Չարենցը գալիս է Երեւան, ներկայանում Նիկոլ Աղբալյանին եւ նշանակվում Հայաստանի Հանրապետության հանրային կրթության եւ արվեստի

նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար (ԳՄ, էջ 273):

Ըստ Աղբալյանի *«Եղիշե Չարենցն ու ես»* հուշի՝ *«Մտավ աղքատիկ հագուստով մի նիհար երիտասարդ, անխնամ մազորով մի գլուխ վտիտ ուսերին, դեմքի մորթը տժգույն ու քաշված եւ քիթը մեծ ու սուր: <...>: Լրագրի մեջ կարդալով դասախոսության մասին, թողած է պաշտոնատեղին եւ եկած է Երեւան: Ասացի, որ նախարարությանս նախահաշվի մեջ նշանակված է մի պաշտոն.- «անձնական քարտուղար»: Այդ պաշտոնի համար մարդ չեմ հրավիրած. ես ինքս եմ իմ քարտուղարը, մարդու կարիք չունիմ: Բայց հիմա ես ձեզ նշանակում եմ այդ պաշտոնին: Շենքիս մեջ ունեմ մի ազատ սենյակ. կարող եք այնտեղ ապրել: Բայց ձեր «պաշտոնն» արդարացնելու համար պետք է մի բան անեք. կազմեք նախարարությանս շենքի իրացանկը: Դուք ազատ եք, երբ ուզեք՝ եկեք պաշտոնի»* (Ն. Աղբալյան, Եղիշե Չարենցն ու ես (նյութ հայ գրականության համար).- *«Ակոս»*, 1945, Զ. գիրք, էջ 330-331; *«Գրական-քննադատական երկեր»*, 1959, էջ 329-330; *«Չարենցի հետ: Հուշեր»*, 1997, էջ 61-62):

Նշանակման հրամանը ստորագրել է Աղբալյանը: Մի բան անելու համար պետք է կազմեր նախարարության *«իրացանկը»:* Աղբալյանի նպատակն էր՝ *«հնար տալ ապրելու եւ իր կոչումին հետեւելու»:* Աշխատավայրը գտնվել է Նալբանդյան 58 հասցեում:

Հունվարի 1-ից չէր կարող լինել Երեւանում, քանի որ *«Օրիորդ Աշխենին»* բանաստեղծությունը գրել է հունվարի 15-ին՝ Կարսում, եւ նույն օրն էլ նույն տեղում նրան է նվիրել նշված գրքերը:

Ըստ Ալ. Զաքարյանի՝ Կարսից արդեն անվերադարձ դուրս է եկել 1920 թ. հունվարի 23-25-ի միջակայքում, *«Երեւան է հասել հունվարի 25-26-ին՝ կեսօրից առաջ»* (*«Եղիշե Չարենց»*, I, էջ 573, 585): Ըստ Գառնիկ Անանյանի՝ Չարենցը պաշտոնի է նշանակվել հունվարի 26-ին (*«Չարենցի հետ»*, 1980, էջ 59): Ավելացնենք, որ նախապես Անանյանը սխալվել էր. *«1919-ի դեկտեմբերին Ե. Չարենցը գալիս է Երեւան»* (*«Եղիշե Չարենցը եւ ռուս գրականությունը»*, էջ 148):

Ի՞նչ էր անում Չարենցը նախարարությունում. Աղբալյանի տեղակալ Պողոս Սոտնիկյանը բողոքել է. *«Դուք նրան երես եք տալիս, պարո՛ն Աղբալյան, ոչ մեկի չի ենթարկվում, ոչինչ չի անում, նախարարության իրացանկն էլ դեռ չի կազմել»:* Բարեհոգի ժպիտով Աղբալյանը պատասխանում է. *«Դուք խելոք մարդ եք, պարո՛ն Սոտնիկյան, Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որն ավելին կարժենա, քան նախարարությանդ ամբողջ փտած գույքը... Հանգիստ թողեք նրան»* (զրույցին ներկա է եղել Կարո Մելիք-Օհանջանյանը եւ պատմել Գ. Անանյանին, *«Եղիշե Չարենց»*, 1987, էջ 57):

Նախարարությունում աշխատած ժամանակ Երեւանում Չարենցն ապրել է Դերենիկ Դեմիրճյանին հատկացված արվեստի վարչության գրասենյակում, ապա Նազարովսկայա փողոցում:

1920, հունվարի վերջ - փետրվար – *«Յառաջ»* օրաթերթը (29 հունվար, թիվ 20, 7 փետրվար, թիվ 28, 21 փետրվար, թիվ 39, 24 փետրվար, թիվ 40) տպագրում է Գ. Նայիրյան ստորագրությամբ հանդես եկող Վարդգես Ահարոնյանի *«Հայ գրականությունը 1919 թվին»* հոդվածը: Անդրադառնալով մի քանի հեղինակների՝ նա հիմնականում քննաբանում է Չարենցի գրքերը, հատկապես՝ *«Ամբոխները խելագարված»*-ը եւ, հակադրվելով Աղբալյանի դրույթներին, ժխտում Չարենցին: Նրան հատկապես զայրացնում է *«բոլշեւիկյան քաղաքացիական կռիվների»* անդրադարձը *«Ամբոխներ...»*-ում: Ըստ նրա՝ *«Չարենցի կարողությունը մեծ չէ եւ որոշ, բայց նա կա, եւ նրա ամենամեծ հայտնագործությունը, որ 19 թվին բաշխեց մեզ, նրա բոլշեւիկյան կռիվներից մի դրվագն է բանաստեղծորեն կերտած»:* Համատարած իջեցումն ավարտվում է այսպիսի գնահատությամբ. *«Եվ այն խոյանքը, որ դրել է Չարենցը իր «Ամբոխները խելագարված»-ի մեջ, եւ այն պաշտումը, որ նա ունի դեպի ամբոխը, թափն ու կռիվը, կմնա 19 թվի հայ քնարերգության լավ գյուտերից, լավ էջերից մեկը»:*

«Մեր կարծիքով՝ դեռ Չարենցը իրեն չգտած բանաստեղծ է: Նա նաեւ անհավասարակշիռ է որպես գեղագետ... Չարենցը անգիտակ եւ ինքնաբուխ երգիչ է. այս հանգամանքը իրավունք է տալիս մեզ, ելնելով հոգեբանական մի շարք որոշ դրույթներից, ասելու, որ այսքան ծայրահեղ կենսահիացումը, որը յուրահատկորեն հիմնավորված չէ, կարող է տեղի տալ՝ չստեղծելով ոչինչ մնայուն»:

Գ. Անանյանը Գ. Նայիրյան ստորագրությունը համարում է Գառնիկ Շահինյանի գրչանունը, (տես՝ Գ. Անանյան, *«Եղիշե Չարենց»*, 1987, էջ 54-55: Գառնիկ Շահինյանի մասին տես՝ Դ. Գասպարյան, Բանաստեղծն ու իր ընթերցողը.- *«Հայ գրականություն»*, VI, 2017, էջ 311-321):

1920, 5 փետրվար – Մոսկովյան պրոլետկուլտից առանձնանում եւ լուսժողկոմին կից ձեւավորվում է *«Կուզնիցա»* խմբակցությունը, որի գաղափարական անդրադարձները թափանցում են հայ իրականություն:

1920, 18 փետրվար – *«Գառնիկ Քալաշյանից սիրելի Եղիշե Չարենցին»* ընծայագրով ստանում է վերջինիս *«Ներշնչումներ»* (Վաղարշապատ, 1908) բանաստեղծությունների ժողովածուն: Քիչ ներքեւում Չարենցի տողն է. «Դառն՝ խորհուրդը սիրո...ե, որ վերաբերում է նրանց փոխհարաբերություններին:

1920, 29 փետրվար – *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 4) Դավիթ Անանունը *«Իմացության թախիծը»* գրախոսությամբ անդրադառնում է Թումանյանի *«Քառյակներ»* (Թիֆլիս, 1920) գրքին:

1920, փետրվար - հունիս – Գրում է *«Էմալե պրոֆիլը Ձեր (Գալանտ երգեր)»* շարքը՝ նվիրված Արմենուհի Տիգրանյանին: Ընդգրկում է 26 բանաստեղծություն, որից 10-ը՝ տրիոլետ: Հինգ բանաստեղծություն 1921-ին տպագրվել է *«Գեղարվեստ»*-ում (թիվ 7), իսկ շարքն ամբողջությամբ՝ ԵԺ, I հատորում (1922)՝ *«Արմենուհի Տիգրանյանին»* ուղերձով:

Չարենցի շարքի *«Գալանտ երգեր»* ենթավերնագրի համար նախադրյալ կարող էր հանդիսանալ Պոլ Վեռլենի *«Գալանտ տոնակատարություններ»* (*«Les fetes galantes»*, 1869) ժողովածուի վերնագիրը:

Երեւանյան գրական երեկոներից մեկում կարդում է գործեր նշված շարքից եւ արժանանում Շանթի հավանությանը: Զորյանը վկայում է. *«Այդ հավաքույթներից մեկում կարդաց «Էմալե պրոֆիլը». Լեւոն Շանթը համակրանքով խոսեց Չարենցի մասին: Դա եւս նպաստեց Չարենցի համբավին» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին»*, 1986, էջ 69):

Չարենցի պոեզիայի մշտական ուղեկից Երգի դիցուհին այստեղ ներկայանում է Բարձրաշխարհիկ Տիկնոջ կերպարանքով: Շարունակում է պառնասականների ներկայությունը՝ Լըկոնտ դը Լիլի, Թեոֆիլ Գոթիե, Հերեդիա), նաեւ խորհրդապաշտների (Վերլեն, Բլոկ, Տերյան) ավանդույթը. աչքի առջեւ Գեղանի Տիկինն է՝ իր բոլոր հմայքներով, քմայքներով, զուգաներով, նազերով, բույրերով ու շարժուձեւով: Ակնհայտ է ֆրանսիական պառնասականների ներկայությունը՝ Լկոնտ դը Լիլի պոեզիայի անմիջական ներգործությունն ու հեղինակի առկա մասնակցությունը, Թեոֆիլ Գոթիեի *«Էմալներ եւ կամեյաներ»* (1852) հուշանվերային գրքի շունչը, Ժոզե Մարիա Հերեդիայի հնչյունների քանդակային նրբագեղ արտահայտչականությունը (*«Ռազմավար»*, 1893): Ընդհանրություններ ունի Տերյանի *«Կատվի դրախտ»*, Բլոկի *«Ձյունե դիմակ»*, Ռիլկեի *«Նոր բանաստեղծություններ»* շարքերից, Բոդլերի *«Չարի ծաղիկներ»*-ի հետ:

Եղիշե Չարենց - Արմենուհի Տիգրանյան (1888, 21. V. Գյումրի – 1962, 11. XII. ԱՄՆ) անձնական հարաբերությունները ձեւավորվել ու խորացել են 1920-ի հունվարի վերջից: Իրար կարող էին ճանաչել *«Պանդոկ»* գրական ակումբի հանդիպումներից: Մտերմացել են Աղբալյանի գլխավորած նախարարությունում, ուր միասին աշխատում էին: Կարսից վերադառնալուց հետո Չարենցը ներկայացել էր նրան, նրա միջոցով՝ Աղբալյանին: Արմենուհին Արմեն Տիգրանյանի քույրն էր, Ավետիս Ահարոնյանի որդու՝ հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի կինը:

Արմենուհին մինչեւ 7-րդ դասարանը գիմնազիական կրթություն է ստացել ծննդավայրում, այնուհետեւ ուսանել է Թիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացներում:

Կապված էր հայ գրական շրջանակների հետ: Նրանով խանդավառված էին Թումանյանը, Տերյանը:

Տերյանի հետ 1910-1912 թթ. հանդիպել են, ունեցել են նամակագրական կապ (Տերյանի երեք նամակները՝ հասցեագրված Արմենուհի Տիգրանյանին տես՝ ԵԺ, IV, 1979, էջ 24-26, 39-41, 47-48): Թիֆլիսից 1910-ին Տերյանին հասցեագրած իր մի նամակի մեջ Տիգրանյանը զետեղել է բանաստեղծություններ՝ *«Գարուն»*-ում տպագրելու համար, եւ հարցնում է ժամանակի մետրի կարծիքը: Պարզվում է, որ ինքը նախապես ստացել է Տերյանից նամակ, որի մեջ նշումներ կան իր բանաստեղծությունների վրա (ԳԱԹ, ԿՄՖ, 779):

շարունակությունը՝ էջ 10

Հետահայաց

Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն



Այդ ե՞րբ եղավ... Ինչպե՞ս եղավ... Ինչո՞ւ եղավ... Ո՞րն էր այն առաջին ճակատագրական զիջումը, նահանջը, որ շարունակվեց 10 տարի, 100 տարի, 5 դար, հազարամյա՜կ... Դարձավ 1045-ի՝ Անիի կործանումից, **Գագիկ Երկրորդ** վերջին **Բագրատունի** արքայի եղերական վախճանից մինչեւ **1915**-ի ցեղասպանությունը ձգվող մի չարչարանաց հավերժություն... Այդքա՛ն երկա՞ր մի հոգեվա՞րք... Այդքա՜ն հզոր, ամե՜ն բանով հզոր, մարդկային պատմության ամե՛ն նոր հանգրվանի առաջամարտիկ, **Քրիստոնեությունն** առաջինը պետականորեն ընդունած, աշխարհին ամենից ինքնատիպ ու փառահեղ քաղաքակրթություններից մեկը պարգեւած, այդքա՜ն կարող ու այդքա՜ն անքեն ու ամենասե՜ր, այդքա՜ն ամենքին նման ու ամենքին հարմարվող, ամենքին տե՛ր ու ամենքին ծառա՜, բայց այդքան ինքնասպա՞ն...

Ո՞վ էր, ի՞նչն էր ստիպում **Պատմահորը** գրել *«Թեպետ եւ եմք ածու փոքր...»*... Ախր, այդ ումի՞ց էիր փոքր, Քերթողահա՛յր, այդ քանի՞ ազգ ու ազգություն կար աշխարհում, եւ դրանց ո՞ր մասն էր քեզանից մեծաքանակ կամ քեզանից առաջավոր ու հզոր... Այդ *«փոքր»* բառը մնաց ոչ միայն քո *«Հայոց պատմության»* կամ մեր պատմագիտության մեջ իբրեւ դառնացած մի պահի ասված խոսք, այլեւ դարձավ հոգեբանությո՜ւն, անհաղթահարելի՛ մի հիվանդությո՜ւն, որ ժամանակների մեջ ո՛չ միայն չբուժվեց, այլեւ վերածվեց *«ստրկախտի»՝* ընդհուպ մինչեւ 20-րդ դարավերջ...

Ո՞վ, ի՞նչը ստիպեց քեզ, **Փո՛քր Մեր**, որ անհա՜ղթ էիր, անպարտելի՛ ու անմա՛հ, հեռանա՜լ աշխարհից, ինքնակա՛մ գնալ ու փակվե՜լ *Ագռավաքարում...*

Սասունցի՛ Դավիթ, որքան ուժեղ, այնքան միամի՜տ Դավիթ, մինչեւ **Չենով Օհանը** չկանչեց, չելար հորից... Ի՞նչ է, չէի՞ր հավատում, որ հենց քեզ թափ տաս, ելնելու ես հորից, ինքնուրո՛ւյն, եւ քո՛ ուժով, որքա՜ն էլ որ հորը խորը լինի կամ հսկա քարերով փակված...

Անպարտելի՛, անասելի՛ հզոր ու այդքան անվստա՞հ... Եղե՞լ է գեթ մի դեպք, որ օտարից հոգնած՝ ապավինես միայն **Քո՛** ուժին, ու սխալված ու պարտված լինես: Երբե՛ք: Միշտ սխալվել ու պարտվել ես, երբ հույսդ դրել ես ուրիշի օգնության վրա:

Քո աստեղային ժամերին, երբ սթափվել ես մի պահ ու թափ ես տվել Քեզ Քո էպոսի հերոսի նման, մի՛շտ հաղթել ես, ու չկա՛ մի ուժ այս արեւի ներքո, որ կասեցնի Քո հաղթական ելքը ամենաանելանելի վիճակից անգամ... Եթե միայն Ի՛նքդ, Ի՜նքդ կամենաս ու քայլդ անես միայնա՛կ, մեն-մենա՛կ, ինքնուրո՛ւյն, Քո՛ սեփական բազկի ու մտքի ուժին ապավինած... Ինչպես **Սարդարապատում,** ինչպես **Արցախում**...

Այդ ումի՞ց ես փոքր կամ փոքրաթիվ... Աշխարհում շուրջ **5000** ազգ ու ազգություն կա: Դրանցից միայն մոտ **200**-ը ունեն պետություն, որոնց աշխարհը ճանաչել ու հաշվի է առնում որպես այդպիսին: Դրանց շարքում Դու Քո բնակչության թվով **առաջին** հարյուրյակի մեջ ես, տվյալ լեզվով խոսողների թվով **75**-րդն ես, իսկ աշխարհում տարածվածության հաշվարկով **հայերենը** գտնվում է աշխարհի ամենատարածված լեզուների **առաջին տասնյակում**... Դե, ասա՛, այդ ի՞նչ հաշվարկով ես Դու փոքր... Ու ասա՛ նաեւ՝ ումի՞ց ես պակաս եւ ինչո՞վ... Խելքո՞վ: Քաջությա՞մբ: Ծագումո՞վ: Լեզվո՞վ: Մշակույթո՞վ... Գուցե ռազմական տաղանդո՞վ... Վիրավորվեցի՞ր... **Անդրանիկն** աշխարհի միա՛կ զորավարն է, որ որեւէ ճակատամարտ երբեւէ տանուլ չի տվել... Հապա այդ ինչպե՞ս եղավ, ինչո՞ւ եղավ...

շարունակությունը՝ էջ 7

Ստեփանակերտը կրկին ալեկոծված է



Համընդհանուր խռովքի թելադրանքով Կամ՝ մի քիչ թվաբանություն

սկիզբը՝ էջ 6

Դու արդեն ելել ես Ագռավաքարից: Վկա՝ Քո 25-ամյա անկախությունը: Ե՞րբ պիտի մոռանաս «բարեկամ» օտարի գոյությունը, որպեսզի այլեւս երբեք չպարտվես ոչ բարեկամ օտարներին... Թույլ տուր՝ հավատամ, որ այսօր, ապրիլյան այս վերջին քառօրյա պատերազմում Քո հերթական հաղթանակից հետո, Դու վերջնականապես սթափվել ես Քո հազարամյա նիրհից ու Քո **արքայական** արժանապատվությամբ քայլ առ քայլ վերականգնելու ես նաեւ Քո **Մեծ Հայրենիքը**: Քո՛, միա՛յն Քո մտքով, ու Քո, միա՛յն Քո բազկի ուժով, ամբողջությա՛մբ, առա՛նց որեւէ զիջումի, որովհետեւ Դու Քո բոլոր զիջումներն արել, ապրել ու սպառել ես արդեն հազար տարի...

... Տասը տարի առաջ՝ հունվարի առաջին օրերին, լրատվամիջոցները տեղեկացրին ադրբեջանցիների հերթական բարբարոսական արարքի մասին... ցուցադրվում էին Իրանի տարածքից նկարահանված կադրեր, որոնցում ազերի զինվորները հսկա մուրճերով ջարդուխուրդ էին անում հայկական մշակույթի վերջին բեկորները՝ նախիջեւանյան 10.000 խաչքարերի վերջին մասունքները... Քանի՞ եկեղեցի, քանի՞ խաչքար, հայկական մշակույթի քանի՞ անգին վկայագիր է ոչնչացվել 1920-ից ի վեր... Ո՞վ է հաշվել: Այդ թվականից սկսած՝ ռուս բոլշեւիկների կողմից արհեստականորեն ստեղծված Ադրբեջան վարչական միավորին բռնակցված Նախիջեւանում (փառք Աստծո, Արցախն այսօր ազատագրված է) քանի՞ հայ է սպանվել, տարհանվել... Պատմագիտական տվյալներն ու իրողությունները չթվարկենք: Մանավանդ որ պատմություն չունեցող եւ այդ պատճառով էլ պատմագիտություն չսիրող մեր սինլքոր թշնամու մի ներկայացուցիչ (հիշո՞ւմ եք 80-ականների վերջերին ազերիների՝ գրողների միության Անար անունով նախագահին) կարող է բարբաջել, թե հայերը մազոխիստ են...

«Լա՛վը չես, խեղճ ես, լավը չես, զավա՛կս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լա՛վը չես, մեջդ վրեժ չկա... Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է - իբր թե լավն ես, խղճով ես, եւ էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, զավակս, զավակս... մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան ու չպիտի էնքան դառը լինի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու գովում են, զավակս, քեզ կուլ են տալիս: Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է խիղճ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է», - ասում է Հրանտ Մաթեւոսյանը... Ինչո՞ւ խղճացինք: Պահը եկել էր՝ դարավոր ոսոխի այդ մի հատվածը աշխարհի երեսից ի սպառ ջնջելու... էլ ինչո՞ւ ենք պաշտում **Նժդեհին.** *«Ուժն է ծնում իրավունք»,* եթե չպիտի լինենք նրա պես վճռական: էլ ինչո՞ւ ենք հպարտանում պատմությամբ ու հիշում պատմահորը. *«Սահմանք քաջաց՝ զենք յուրյանց»*, եթե... շիրմաքար պղծողին պետք է պարզապես ոչնչացնել... Լու՜յս իջնի հոգուդ, **Խրիմյան Հայրիկ**, *«երկաթե շերեփի»* Քո դասը դեռ չենք սերտել ինչպես որ հարկն է ու դարձյալ ապավինում ենք թղթե «շերեփներին»... Մինչեւ ե՞րբ...

Մշակութային այդ եղեռնագործությունից օրեր անց հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած սինլքոր մարդասպանին Ադրբեջանը հռչակեց տարվա մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը (թուրք, թե ազերի) չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի գոյություն**՝ անգամ իր տիրապետության ներքո... Իր **չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախիջեւանյան խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությունը իր **գողացած տարածքում**... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքցնել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգավոր, քանի դեռ ոչնչացված չէ **ի սպառ**...

... Ուզենք, թե չուզենք, մենք ակամա ներքաշված ենք մեծ պատերազմի մեջ: Այն սկսվել է 1000 տարի առաջ, երբ առաջին անգամ թուրք տարրը մտավ Հայկական Լեռնաշխարհ: Չենք ուզեցել, չէ՞, բայց նա տարիներով, դարերով խմել է մեր արյունը, մեր հայրենիքում ստեղծել է պետություն, երկիր, ոչնչացրել է մեզ ու մեր ստեղծած քաղաքակրթությունը 1000 տարի՝ ընդհուպ մինչեւ ցեղասպանություն... 1000 տարի մեր խաղաղասեր էության թելադրանքով մենք մեզ միշտ խաբել ենք, թե պատերազմն ավարտվել է, թե վերջապես մեզ բաժին մնացած այս մի փշրանք հողակտորի վրա գոնե կարող ենք ապրել ու ստեղծել խաչով ու գրչով, բահով ու մուրճով, մտքով, քանքարով...

Ավա՜ղ... պատմության դասերն այդպես էլ մինչեւ վերջ չենք սերտում ու մերթընդմերթ ստիպված ենք լինում ինքներս մեզ հիշեցնել, որ ազգերի միջեւ, ինչպես բնության մեջ, գործում է **գոյության կռվի սկզբունքը**:

Մանավանդ, որ գողը մտել է տունդ, դու, ուզես, թե չուզես, նա գիտի, որ գող է, նա վախենում է քեզանից: Որքան էլ դու մոռանաս, նա չի մոռանում, վախից կծում է... անընդմեջ, անընդհատ, ամեն անգամ, երբ երախը հասնում է կրնկիդ... Իսկ դո՞ւ... *«Թե՞ էդքան դուրեկան է ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ ու հավատալ, թե աշխարհը բարի է»,* - դարձյալ ասողը Հրանտն է... Չգիտեմ... Գուցե ավելո՞րդ են զգացական այս դատողությունները, որ կարող են լինել ու կան յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ: Բայց ինչո՞ւ մեր փորձը, մեր քաջությունը, մեր հայրենասիրությունը, մեր ազատասիրությունը արդեն 1000 տարի չեն դառնում թշնամուն չներող ու արժանի հարված հասցնող իրակա՛ն ուժ (բացառյալ աստեղային ժամերին դրսեւորվող բռնկումները): Նույնիսկ Արցախն ազատագրելուց հետո էլ (կարծես թե մեղավո՜ր ենք եղել, որ հաղթել ենք մեր դեմ սրով ելածին) մեր ենթագիտակցության մեջ երբեմն գլուխ է բարձրացնում փոխզիջման գաղափարը: Ի՞նչ փոխզիջում, Տե՛ր Աստված... Հաղթողին չե՛ն դատում: Իսկ եթե փորձում են դատել, հաղթողը կրկի՛ն է հաղթում... ու այնքան, մինչեւ որ այլեւս չեն դատում...

Ուզենք, թե չուզենք, քնենք, թե արթուն մնանք, թշնամին չի՛ քնում երբեք: Ուրեմն, ուզենք, թե չուզենք, ստիպվա՛ծ ենք լինել զգոն, արթուն, արագ եւ համապատասխան հարված հասցնող... *«Ուժեղի մոտ միշտ էլ թուլն է մեղավոր»...* Հերի՛ք է, որքան արդար եղանք, փորձե՛նք լինել նաեւ ուժեղ: Այլընտրանք չունե՛նք: Պատերազմը չի՛ ավարտվել: Իսկ եթե պատերազմ է, չխաբվե՛նք զինադադարներին: Պատերազմի ժամանակ իրավունքի՛ խնդիր չկա, կա միայն հարվածելու՛, ամեն գնով ու միջոցով թշնամուն ոչնչացնելու՛ խնդիր: Մանավանդ որ հակառակորդը հենց այդպես էլ վարվում է մեզ հետ արդեն 1000 տարի:

1994 թվականին կնքված զինադադարից հետո Աստծո գրեթե յուրաքանչյուր օր այն խախտվել է՝ ընդհուպ մինչեւ վերջին ուխտադրուժ հարձակումը, որ ե՛ւ անսպասելի էր, ե՛ւ սպասելի... Պետք չէ զարմանալ, առավել եւս՝ վրդովվել: «Գորշ գայլը» իր կաշին չի փոխել արդեն հազար տարի: Եվ արդեն հազար տարի պատերազմ է հայտարարել մեզ եւ գործում է՝ ինչպես պատերազմում: Եվ պետք է իրերին նայել, առավել եւս՝ հակառակորդի հետ մեր հարաբերություններն ընկալել ոչ թե մեր խաղաղասեր ոգու տեսանկյունից, այլ պատկերացնել եւ ետադարձել՝ ինչպես պատերազմում:

Աշխարհը փոխվում է: Փոխվում են հարաբերությունների ձեւերը, բայց մնում է մրցակցությունը, գոյության կռիվը... Փոխվում են պատերազմի զենքերը, բայց չի փոխվում թշնամին, մանավանդ, եթե գոյատեւում է քեզանից զավթած քո հայրենիքում եւ պիտի քեզ հարվածի՝ քանի դեռ դու կաս, եւ քանի դեռ ինքը պարտված չէ վերջնականապես:

Զա՛րկ, լաո, զարկողին՝ զա՛րկ:
Պատերազմում՝ ինչպես պատերազմում:

Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ
***«Կրթություն»,* թիվ 17, 20.04.2016թ.**

Հայրենիքիս հետ

Վաղուց թեեւ իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, ե՛ւ շեներից՝ տըխո՞ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՞ծ հայրենիք,
Զըրկվա՞ծ հայրենիք:

Խըռնըվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սեւ ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
Ողբի՞ հայրենիք,
Որբի՞ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՞ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձըգտում է մեր հոգին -
Հույսի՞ հայրենիք,
Լույսի՞ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՞ր- հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետները, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՞ր հայրենիք,
Հըզո՞ր հայրենիք...

Ռավեննայում

Արարատի ծեր կատարին
Դար է եկել, վայրկյանի պես,
Ու անցել:

Անհուն թվով կայծակների
Սուրն է բեկվել ադամանդին,
Ու անցել:

Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել գագաթին,
Ու անցել:

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...



Վահան ՏԵՐՅԱՆ

* * *

Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին, -
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է եւ հին:

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս –
Անհետ կորել է, անցել է - չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մոր թշնամին - ահա՛
Դաշտ է տեղը եւ չըկա քար քարի վրա:

Ամրակուռ է մեր հոգին - դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնտեղ ամեն երգ եւ ողբ ամեն գիրք:

Գերված ենք մենք, ո՛չ ստրուկ - գերված մի արծիվ,
Չարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ ազնիվ:

Բարբարոսներ շատ կըգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ:

Չի հասկանա ձեր հոգին եւ ծույլ, եւ օտար,
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար:

Եգիպտական բուրգերը փոշի կըդառնան,
Արեւի պես, երկի՛ր իմ, կըվառվես վառման:

Որպես Փյունիկ կրակից կելնես, կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացի՛ր, սի՛րտ իմ, ե՛լ հավատով տոկուն,
Կանգնի՛ր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

Եղիշե ՉԱՐԵՆՑ

Վահագն

Փրկության արե՛ւ Վահագնիդ տեսար...
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հրդեհի աստված, հրդեհ ու կրակ,
Օ, Վահագն արի: Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքջում են նրանք,
Արնաքամ ընկած դիակիդ վրա:
Թե մի՞ֆ էիր դու... Եկան, երգեցին
Մի հին իրիկուն գուսանները ծեր,
Որ հզո՞ր ես դու, հրոտ, հրածի՛ն,
Որ դո՞ւ կբերես փրկությունը մեր:
Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի-
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր-
Մեր կյանքի հիմներն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

* * *

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նահիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեւն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սեւ
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ո՛ւր էլ լինեմ – չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՞ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր -
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան - յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:



Նավասարդյան

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արեւափառ՝
Ա՛լ վերածնե փլատակներեն, եւ փառագոչ
Քընարըդ առ:

Հանո՜ւն Ույժին, հանո՜ւն Գեղին, մըտիր մեհյանն
Աստվածներուն.
Ջահը ձեռքիդ՝ բագնե բագին համասըփռե՛
Հուր ու արյուն:

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակըդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սիրտին վըրա
Լեցո՜ւր, լեցո՜ւր:

Ձի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մե՛նք, Ձավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՜ր Արշալույս:

* * *

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,
Հայաստան ասելիս թեւերս բացվում են,
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...
Կմնամ, կլինեմ այսպես:





Համլետ ԿԱՐՃԻԿՅԱՆ

Հայաստան

Քո քարեղեն օրորոցում՝
Քո լեռների ծերպ ու ծոցում,
Երազներիդ շող ու բոցում
Մանուկներն են խայտում խաղաղ,-
Մանուկներն այդ մի օր պիտի
Ելնեն ոտի, կապեն գոտի,
Դիմեն դեպի սարը մոտի՝
Մութուլուսին՝ առավոտ վաղ:

Քո շենացող ավաններում,
Հզորացող քաղաքներում,
Ստեղծագործ ու բյուրանուն
Որդիներդ են ապրում խաղաղ,-
Որդիներդ այդ մի օր պիտի
Ելնեն ոտի, կապեն գոտի,
Դիմեն դեպի սարը մոտի՝
Մութուլուսին՝ առավոտ վաղ:

Հեռո՜ւ - մոտի՛կ քո սարերում,
Անդնդախոր խուլ ձորերում,
Օտար ու մութ աշխարհներում
Բյուր զոհերդ են ննջում, ավա՜ղ,-
Զոհերն էլ այդ մի օր պիտի
Ելնեն ոտի, կապեն գոտի,
Դիմեն դեպի սարը մոտի՝
Մութուլուսին՝ առավոտ վաղ:

Ու երբ սարը ելնեն հառնած,
Արեգակին երգեր խառնած,
Պիտի մեռնի՜ դարը արնած՝
Շրթունքներին նենգ քմծիծաղ,-
Ու նոր մի դար զարթնի պիտի,
Ելնի ոտի, կապի գոտի,
Դիմի դեպի սարը մոտի՝
Մութուլուսին՝ առավոտ վաղ:

Քո քարեղեն օրորոցում՝
Քո լեռների ծերպ ու ծոցում,
Երազներիդ շող ու բոցում
Պիտի հառնի նո՛ր առասպել, -
Նոր դարերդ ցնծա՛ն պիտի,
Ելնեն ոտի, կապեն գոտի,
Դիմեն դեպի սարը մոտի՝
Հավերժական պատգամ ու սեր:

Պարույր ՍԵՎԱԿ

Հայաստան

Իմ քաղցրանո՜ւն,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ տառապա՛ծ,
Իմ փառապա՛նծ:
Հների մեջ՝ դու ալեհեր,
Նորերի մեջ՝ նոր ու ջահել.
Դու՝ խաղողի խչմարված վազ,
Վշտերըդ՝ ջուր, ինքըդ ավազ.
Դու՝ բարդենի սաղարթաշատ,
Առուն ի վար փռված փշատ.
Դու՝ կիսավեր ամրոց ու բերդ,
Մագաղաթյա մատյանի թերթ.
Դու՝ Ձվարթնոց - ավեր տաճար,
Կոմիտասյան Ծիրանի ծառ.
Դու՝ ջրաղաց խորունկ ձորում,
Դու՝ հորովել անուշ ծորուն,
Փայլ գութանի արծաթ խոփի.
Դու՝ նե՛տ, նիզա՛կ, մկո՛ւնդ կոպիտ,
Դու՝ հայրենի ծխանի ծուխ,
Դու՝ անգի՛ր վեպ, դու՝ Սասնա ծո՜ւռ...

Իմ փառապա՛նծ,
Իմ տառապա՛ծ,
Իմ բարձրանո՜ւն,
Իմ քաղցրանո՜ւն:
Դու՝ մրգերի շտեմարան,
Ոսկեվազյան գինու մառան.
Դու՝ թավշե դեղձ, դու փրփուր հաց,
Արտաշատյան խաղող սեւաչ.
Դու՝ Սեւանի վառվող կոհակ,
Երեւանի սյուն ու խոյակ.
Դու՝ հանգրվան, կանչող փարոս,
Դու՝ հայկական գերբ ու դրոշ.
Խոսուն վկա կոտորածի
Ու վճիտ աչք ցամքած լացի.
Արդարության ահեղ ատյան,
Սրի պատյան,
Սիրո մատյան –
Միշտ հի՛ն ու նո՛ր իմ Հայաստան:



Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ էջ 5

Նամակներից առաջինում (9.VII. 1911) Տերյանը հիշում է Տիգրանյանի տանը անցկացրած հաճելի մի երեկոյի մասին, երբ կարդացել են *«Աբու-Լալա Մահարի»*-ն: Երկրորդում (5-10. VI. 1912) ասում է, որ իրեն հիմա հաճելի կլիներ մոտիկ լինել Արմենուհի Տիգրանյանին եւ խոսել իր գրական ծրագրերի մասին, որովհետեւ դա ամեն մեկին մատչելի, ո՞ւր մնաց՝ հասանելի բան չէ: Բացահայտ արհամարհանք տածելով գրականություն չընթերցողների, գրականության անունից վեր թռածների հանդեպ՝ Տերյանը գրում է. *«Գեղարվեստ հասկանալն էլ մի երկնատուր շնորհք է, մի տաղանդ եւ որքան որ դուրեկան է այդ տաղանդով օժտված մեկի հետ զրուցելը, նույնքան անտանելի է այդ տաղանդից զուրկ մարդկանց հետ խոսելը»* (ԵԺ, IV, էջ 40): Երրորդ նամակը (7. VIII. 1912) ավելի անձնական-մտերմական բնույթ ունի: Նամակներից նկատելի է, որ Տերյանը գնահատել է բանաստեղծուհու ձիրքը: *«Ձեր», «Դուք»* Տերյանը գրել է մեծատառ:

Անձնական-անմիջական ներշնչանքով Տիգրանյանը գրում էր տերյանական բանաստեղծություններ: Արմենուհի Տիգրանյան (Մենուհի) ստորագրությամբ 1914-ին Թիֆլիսում լույս է ընծայում երազներից, սիրուց, կարոտից, աղոթքից, թախիծից, ցավից, մորմոքներից ու հուսահատությունից հյուսված *«Բանաստեղծություններ»* քնքշանվաղ գրքույկը, որն արժանանում է Նիկոլ Աղբալյանի գրախոսությանը. *«Արմ. Տիգրանյանը պատկանում է Վ. Տերյանի խմբին. նույն ժամանակի ծնունդ է եւ նույն տրամադրությունների երգիչ: Նրա գրքույկը? իբր վավերագիր, կարող է մեզ նպաստել ճանաչելու հոգիների նույն տեսակը, որ ստեղծել է մեր կյանքը վերջին տասնամյակում»* (*«Գրական-քննադատական երկեր»*, 1959, էջ 302):

Միշտ լինում են միջին շերտի բանաստեղծներ, որոնց անունները երբեմն խառնվում ենհաստատուն շերտ կազմող անտաղանդների հետ եւ մոռացվում: Տերյանից հետո այդ միջին շերտի մեջ էին Ազատ Վշտունին, Գեւորգ Աբովը, Գառնիկ Քալաշյանը, Համբարձում Մազմանյանը, Վեսպերը, Լանտեն եւ ուրիշներ: Այդ անուններց մեկն էլ Արմենուհի Տիգրանյանն է:

1918-ին տեղափոխվում է Երեւան: Չարենցի հետ մեկտեղ տպագրվում էր *«Հայաստանի կոոպերացիա«*-ում: Ահա 1920-ի, թիվ 1-ում տպագրված բանաստեղծությունից մեկ քառատող, ուր իսկական կինն է, ով նաեւ հաճելի սեթեւեթել գիտի.

Այսօր կրակ եմ հագել,
Այսօր ժպիտ եմ համակ.
Այսօր այցի եմ եկել–
Անկոչ եւ անժամանակ:

ԳԱԹ ՉՖ-ում (թիվ 3) Արմենուհի Տիգրանյանին նվիրված Չարենցի բանաստեղծությունների ինքնագրերն են, որոնք որոշ վրիպակներով տպագրվել են ԱՉԵ-ում: Այստեղ պահպանվել է նաեւ Արմենուհու երկու ինքնագիր: Առաջինը թվագրված է *«1920, փետրվարի 16»*.

Այսպես բաժան, բախտով դաժան
Քեզնից հեռու մի լուռ ուրու
Տենչում էի երազում գեթ լինել քեզ հետ,
լինել քեզ հետ:
Ու ժպտացի, ու թախծեցի,
երբ կարոտով նկատեցի
Իմ դեմ դիմաց պատից կախած
մի լուռ նկար՝
խենթ ճանապարհ,
Փոշով արբած ծիերն անսանձ
թռչում էին սուր-սրընթաց.
Սիրտս էլ խաբված այնպես թնդաց
նկարն անհուն հաճույք թվաց:

Երկրորդը թվագրված է 1921, մայիսի 20 եւ վերնագրված է *«Չարենցին էքսպրոմտ»*.

Չարենց, գիտես, չէ՞, դու գիտես
Որքան թանկ է ընկեր հոգին,
Բայց դու գիտես եւ չգիտես
Ով է եղել միշտ քո կողքին:

Եվ ինձ նման դու էլ որքա՜ն
Թանկ ես վատնել, թանկ ու բյուրեղ՝
Հավատալով, որ կան, ախ կան
Լավեր, նորեր մեր մեջ այստեղ…

ԳԱԹ ՉՖ-ում (թիվ 245) պահվում է Լեյլիի բանաստեղծությունների ալբոմը, որը բացվում է Արմենուհի Տիգրանյանի *«Նորը լավ է, քան թե հինը. // Ապրենք նորերս նորով»* տողերով սկսվող բանաստեղծությամբ՝ թվագրված 13. IV. 1919, Թիֆլիս: Չարենցի ձեռագրով սեպտեմբերի 16-23-ին հաջորդում են *«Խրախճանք», «Շամիրամ», «Անկումների սարսափից», «Վարսավիրի հմայքներ», «Հայացքների թակարդում» «Շան կարոտներ», «Խեղկատակ», «Մեսալին»* բալլադները:

Հաջորդում են նախ՝ 1921-ի մայիսին Արմենուհու հուշատետրում գրած երեք պատասխան տիոլետները՝ *«Մենք տվել ենք վառվող մեր հոգին…», «Ու հիմա մնացել ենք մենակ…», «Մնացել ենք մենակ ու շվար»* (տես՝ *«Հայրենիք»* ամսագիր, Բոստոն, 1952, թիվ 12) եւ ապա՝ *«15. I. 1922»* թվագրությունն ունեցող Չարենցի *«Մոսկովյան տրիոլետները»* (գրված Մոսկվայում)՝ *«Կարտոշկա, պրիմուս ու ծմեռ…», «Հիշո՞ւմ ես կոնյակը Սահակի»:*

Արմենուհի Տիգրանյանի ամուսնու՝ Վարդգես Ահարոնյանի հետ Չարենցի հարաբերությունները լարվում են կռվազանության աստիճանի: *«Էմալե պրոֆիլը Ձեր»* շարքի հինգ բանաստեղծություն 1920 թ. սեպտեմբերի 11-ին ուղարկում է Գարեգին Լեւոնյանին՝ տպագրելու *«Գեղարվեստ»*-ում: Սեպտեմբերի 20-ի նամակում ուշացումով խնդրում է չտպագրել, բայց արդեն ուշ էր: Պատճառը Վ. Ահարոնյանի հետ անձնական փոխհարաբերություններից առաջացած լարվածությունն էր:

1922-ին, երբ Արմենուհին ու Վարդգեսն արդեն Հայաստանում չէին, *«Էմալ» պրոֆիլը Ձեր (Գալանտ երգեր)»* շարքն ամբողջությամբ տպագրում է ԵԺ, I հատորում (1922):

Շարքից բացի, կան նաեւ շարքից դուրս բանաստեղծություններ՝ *«Նորից՝ Արմենուհի Տիգրանյանին»* (չորս գործից բաղկացած շարք), *«Միայն քեզ համար (Արմենուհի Տիգրանյանին)», «Միայն քեզ համար (Արմենուհի Տիգրանյանին)»*, *«Արմենուհի Տիգրանյանին»*՝ թվագրված *«8. III. 1920», «9. III. 1920», «10. III. 1920»*, որոնք 1964-ին Հայաստան է բերել եւ ՀԳՄ առաջին քարտուղար Թոփչյանին է հանձնել հոգեպես ոչ թե խաղաղված, այլ արդեն մոխրացած Վարդգես Ահարոնյանը, երբ վաղուց չկար Չարենցը, չկար նաեւ Արմենուհին: Նրա վեհորեն ասպետական այդ քայլը արժանի է հիացմունքի: ԱՄՆ վերադառնալուց հետո՝ 1965 թ. փետրվարի 19-ին, Վ. Ահարոնյանը մահացել է:

Բանաստեղծությունները լույս են տեսել ԳԹ-ում (1964, թիվ 39, 25 սեպտեմբեր)՝ հետեւյալ ծանոթությամբ. *«Եղիշե Չարենցի ստորեւ տպագրվող բանաստեղծությունները, նվիրված Արմենուհի Տիգրանյանին, Հայաստանի սովետական գրողների միությանն է հանձնել Ամերիկայի Միացյալ Նահանգներից որպես զբոսաշրջիկ Երեւան ժամանած Վարդգես Ահարոնյանը»:* Ավելացվում է, որ դրանք *«սերտորեն առնչվում են» «Էմալե պրոֆիլը Ձեր»* շարքին:

Ինքնագրերը մնացել են Թոփչյանների մոտ, մինչդեռ պետք է հանձնեին ԳԱԹ:

Արմենուհի Տիգրանյան-Ահարոնյան ստորագրությամբ 1969-ին Բեյրութում լույս է տեսել *«Բանաստեղծություններ»* գիրքը, որին կցված է Չարենցի համաքաղաքացի Էլեն Բյուզանդի (Եղիսաբեթ Ստամբոլցյան) շատ խոսուն առաջաբանը: Չկան գրության թվականները, հավանաբար արված է միտումնավոր՝ Չարենցի հետ կապված ինչ-ինչ հետքեր կորցնելու համար:

1920-ին Չարենցն արդեն տարված էր Արփենիկով, թեպետ հոգում դեռ մխում էր Արմենուհու սիրո քաղցր թույնը: Սերը եղել է փոխադարձ, վկայությունն Արմենուհի Տիգրանյանի *«Օրագրիս թերթիկներից: Երբ հոգիները խոսում են»* զգացական խոր ապրումներով գրությունն է՝ *«Եղիշե Չարենցին՝ Մենուհուց»:* 1921 թ. սառնաշունչ մի օր Չարենցն ու Արմենուհին պատահաբար հանդիպում են: Այս մասին է Տիգրանյանի օրագրությունը.

«Ձյուն էր: Ցմեռ: Երեւանի հունվարն էր: Քայլում էի մենակ, երազկոտ ու լռին: Բեռ կար հոգուս վրա, անհուն կարոտի մի բեռ:

Նրան էի երազում: <…>: Հանկարծ դեմս ելար: Ինչպես տառապել էի ու ապրել քո հոգեվարքը…

Հասակդ ավելի բարձր թվաց, ճակատդ ավելի բաց, եւ վեհագույն, տառապանքից խորացած աչքերդ – ավելի գեղեցիկ եւ իմաստուն: Իսկ այն մորթե գլխա՜րկը… Որքան կատարյալ էր դարձնում քո կեցվածքը:

Օ՜, որքա՜ն հպարտ էիր ու երջանիկ այդ պահուն. գլուխդ միշտ վեր էիր բռնել հայրենիքիդ դահիճների առջեւ:

Հպարտ էի եւ ես: Զգացի, թե կյանքում պահեր կան, անփոխարինելի պահեր, երբ մարդ կարող է ըմբռնել ուրիշին, իրենից ավելի երջանիկ լինել ուրիշի համար:

Լավ էր այդպես: Հոգիս աղոթքներ էր մրմնջում եւ կյանքդ օրհներգում: Ուզեցի, որ հանդիպումս կարճ լիներ:

Փոքրիկ, քնքո՜ւշ եւ տառապած մեկ էակ արդեն քայլում էր կողքիցդ: Արժանի էր քեզ: Երջանիկ էի եւ նրա համար: [Նկատի ունի Արփենիկին]:

Մենք բաժանվեցինք: Ձյունի պես ցերմակ եւ մաքուր մի զգացում ողողել էր հոգիս, երբ քայլում էի նորեն մենակ, նորեն կարոտներիս հետ: Բայց տխրեցի մի պահ: Ինչո՞ւ նրա համար էլ այդպես հպարտ ու երջանիկ չեմ <…>: Երանի՜ նրանց, որոնք աղոթելու անկյուններ ունեն իրենց հոգիների խորքում» (*«Հայրենիք»*, 1931, թիվ 12, էջ 75):

Մտերմական կապը վերածվեց բանաստեղծական երկխոսության. ոչ միայն Չարենցի *«Էմալե պրոֆիլը Ձեր»* շարքն է եւ շարքից դուրս նշված գործերն են, այլեւ Տիգրանյանի եղերերգերը՝ նվիրված Չարենցին եւ իմաստավորված իրենց միավորող սիրո, կարեկցանքի, հեռացումի, այդ ամենով հանդերձ՝ հարազատության թանկ զգացողությամբ: Ահա *«1920, Երեւան»* թվագրությամբ գործերից մեկը, որի հերոսը հենց ինքը՝ Չարենցն է.

Քան մեղմությունը շոյող աչքերի,
Սիրում եմ խայթող հայացքը քո չար.
Ավելի դյութիչ է խոսքդ չարի,
Քան բարությունը, հեզությունն անճար:

Լույս երազներես ես իմ ավելի
Սիրում եմ հոգուդ մութը անթափանց,
Անգուշակելի հույզերով է լի
Հոգուդ մթությունը անդնդաբաց:

Եվ հուզումներես, աղոթքներես շատ,
Ծնրադրում եմ կեղծիքիդ առջեւ.
Ա՛ռ անմեղությունը հոգուս վհատ
Ու դատիր, դատիր կախաղան մինչեւ:

Դատիր իմ անզոր բարությանս համար,
Որ մեղրը չարիդ դեռ չեմ ճաշակել,
Դատիր ու պատժիր չարովդ անաչառ,–
Տե՛ս, ուժիդ առջեւ ծունկի եմ եկել:

Քան իմ Աստվածը վսեմ ու բարի,
Պաշտում եմ կամքը քո սատանայի…
Սիրում եմ խայթը քո չար աչքերի,
Դատված լինեմ թող, միայն թե նայի…

Եղիշե Չարենց – Արմենուհի Տիգրանյան մարդկային, գրական հարաբերությունը մի ամբողջ հոգեցունց վեպ է, ուր ե՛ւ իրական մարդն է, ե՛ւ արվեստը, ե՛ւ ժամանակը, ե՛ւ պատմությունը… Հոգեբանական անդունի եզրին Արմենուհին սիրո խոսք է փոխադարձում Չարենցին:

1920, 4 մարտ – Ինչպես ժողովրդի, այնպես եւ գրողների նյութական վիճակը ողբալի էր: Իրավիճակի մասին պատկերացում է տալիս Վրթանես Փափազյանի *«Նամակ խմբագրին»* գրությունը՝ հասցեագրված *«Հայաստանի կոոպերացիա»*-ի խմբագիր Դավիթ Անանունին.

«…Գիտեմ, որ Հովհաննես Հովհաննիսյանը, որին նույնպես հանդիմանում եք, իր բազմամարդ ընտանիքը կերակրելու հաց չունի: Դեռ երեկ էր, որ դիմեց մեր վանքի հացառատ ու լիությունից պայթող ամբարին եւ խնդրեց փոխարինաբար 30 փութ ցորեն, լաց եղավ, այո՛, լաց եղավ… Բայց վանքը մերժեց տալ: Պետք եղավ մի քանի անձերի <…> վրդովմունքը, <…> բուռն բողոքները, որպեսզի, վերջապես, զիջեն վանականները եւ հայ գրողին մի բուռ ցորեն փոխ տային:

Դուք չե՞ք տեսել, թե ինչպես է լալիս մի ալեհեր գրող, երբ պատմում է ձեզ այդ ամենը դողդոջուն ձայնով: Դուք չե՞ք տեսել, թե ինչպես 30-40 տարվա վաստակավոր մի հեղինակ շվարուն, սոսկալի շվարուն ու գրեթե խելքը կորցրած այս այն կողմ է վազում, որպեսզի իր ընտանիքը փրկի սովից… [վանքը նրան ստիպել է դուրս գալ հյուրանոցից, մերժել է տասը կտոր փայտ տալ]:Եվ դուք դեռ հանդիմանում եք, որ հայ գրողը «քար անտարբերության մեջ է ընկել. դեռ սիրտ ունիք վրդովվելու, որ մենք չենք կարողանում գրիչ ձեռք առնել ու Ձեր թերթին մի բան ուղարկել:

Գիտե՞ք Դուք արդյոք, որ ես ամսական միայն 4.600 ռ. ռոճիկ ունեմ, 18 ժամ դաս…

Եվ Դուք ուզում եք, որ ես սիրտ, տրամադրություն եւ կամ մի ժամ գոնե խաղաղ, անդորր հոգի ունենամ, որպեսզի մի բան գրեմ Ձեզ համար եւ առհասարակ գեղարվեստի, գրականության մասին մտածեմ…

Ո՛չ, բարեկամ, մի խնդրիր այն, ինչ որ ջանասիրությամբ մեռցնում են մեր մեջ ամենքը եւ ամեն ինչ: Մի հանդիմանիր մեզ, որովհետեւ մեր զարհուրելի դառնությունը բավական է մեզ, երբ անդրադառնում ենք, թե ինչպես հետզհետե, աստիճանորեն գռեհկանում ենք՝ գռեհիկների հետ գործ ունենալով, ինչպես ջնջում ենք մեր գեղեցկագիտական, գեղարվեստական ամեն նշույլ եւ թե ինչպես մի առ մի կտրտում ենք մեր՝ ոստնումի ձգտումներ ցույց տվող թեւերի բոլոր փետուրները: Եվ այդ գործով զբաղված են ամենքը, վերեւից մինչեւ ներքեւ, գիտակցաբար կամ անմտորեն:

Մի խնդրիր այնտեղից ցորեն, ուր կոխկռտում են ամեն տեսակ ոտներ՝ գարշ ինստինկտների դրդումով, զզվելի անձնական շահերով:

Մի՛ հանդիմանիր, թող որ ինքներս լանք մեր ոստնումների, երազների եւ այնքան քնքուշ միտումների ավերակների վրա:

Մի՛ վրդովվիր ու մի զայրանար. թող որ մեր զգացած խորունկ դառնությունը ատե մեզ եւ մաշե այսպես խուլ ամայությունների մեջ:

Ների՛ր մեզ, որ չենք կարողանում անոթի մնալ, տառապել, գռեհկությունների մեջ ապրել: Մեր զգացմունքների էն լավագույնները քրքիջների եւ լպիրշությունների առարկա թողնել… ու գրիչ ձեռք առնել Ձեր հանդեսին գրվածք ուղարկելու:

1920. մարտ 4, էջմիածին»:

Այս նամակը Դավիթ Անանունի դիմումի հետ տպագրվել է *«Հայաստանի կոոպերացիա»*-ում (թիվ 9, 15 մայիս) Վրթանես Փափազյանի մահից՝ 26. IV. 1920, մեկ ամիս անց:

Այս ամենը Չարենցի աչքի առաջ էր, ինքն էլ դրա մեջ:

1920, 7 մարտ – *«Մշակ»*-ը երկու ամիս անց գուժում է *«Վ. Տերյանի մահը». «Հաստատ աղբյուրներից հաղորդում են, թե բանաստեղծ Վահան Տերյանը վախճանվել է:*

Հանգուցյալը խորհրդային իշխանության մոտ հայկական գործերի վարիչներից մեկն էր: Նա տառապում էր թոքախտից: Վախճանվեց երիտասարդ հասակում»:

շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հրուշակեղենի տեխնոլոգիա»* - 284 դասաժամ, *«Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում»* - 101 դասաժամ, *«Խոհարարական գործ»* - 156 դասաժամ մասնագիտությունների արտադրական ուսուցման վարպետների եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլների) դասավանդողների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Չեւ 1),

- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ8 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցե՝ ք.Երեւան, Վ.Ավանեսովի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (077) 38-07-02, (099) 34-56-44 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Երեւանի պարարվեստի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի ֆրանսերենի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում

- Կրթության մասին հավաստող փաստափուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը)

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)

- ինքնակենսագրություն

- մեկ լուսանկար՝ 3ճ4 չափի

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը)

- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 5-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի պարարվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Բայրոնի 5:

Տեղեկությունների համար դիմել armballet@mail.ru էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել՝ (010) 56-44-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ *«Չարենցավանի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«ֆիզկուլտուրա»* առարկայի դասախոսի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է ըստ Չարենցավանի պետական քոլեջի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգի:

Դասախոսի թափուր տեղի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է «Հանրակրթության մասի» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չեւ 1),

2. Փաստաուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Չեւ 5),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եպւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին,*** *«Չարենցավանի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Չարենցավան, Խորենացի:

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-32-82, (077) 59-96-75, (077) 61-45-20 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում հայտարարում է մրցույթ *«Խոհարարական գործ»* մասնագիտությամբ վարպետի թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը Հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Չեւ 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Չեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** *Արարատի պետական քոլեջում,* հասցեն՝ ք. Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զարգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով:

էլեկտրոնային հասցեն՝ collegeararat@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում»*՝ 786 ժամ մոդուլի դասախոսի թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չեւ 1),

2. Փաստաուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Չեւ 5),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 16:00-ին,*** *«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156:

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի պետական հումանիտար քոլեջ»* ՊՈԱԿ-ի *«Ֆիզկուլտուրա»* 730 ժամ, *«Ինֆորմատիկա»* 730 ժամ, *«Համակարգչային օպերատորություն», «Windows օպերացիոն համակարգեր»* 362 ժամ, *«Հայոց պատմություն»* 730 ժամ, *«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովում»* 365 ժամ ծանրաբեռնվածությամբ առարկաների դասախոսների թափուր տեղերի համար:

«Ապահովագրական գործ» մասնագիտության համար ֆինանսական հաշվարկներ, վիճակագրություն, ՀՀ հարկային օրենսգիրք, կառավարում, վաճառքի հաղորդակցություն մոդուլների (ծանրաբեռնվածությունը 306 ժամ):

«Բանկային գործ» մասնագիտության ֆինանսական հաշվարկների, բանկային համակարգչային ծրագրեր, Բանկային օրենսդրություն, հաշվապահական հաշվառում մոդուլների (ծանրաբեռնվածությունը 502 ժամ):

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը.

1. դիմում,

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3. Անձնագիրը (բնօրինակը եւ պատճենը),

4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)

5. Ինքնակենսագրություն (Չեւ 4),

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչեւ 15:00:***

Մրցույթը կկայանա ***2022թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 14:00-ին՝*** Երեւանի պետական հումանիտար քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)23-99-91, (055) 05-20-38 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

«Երեւանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը այտարարում է մրցույթ հաստատության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 30-ից մինչեւ հոկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի պարարվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Բայրոնի 5:

Տեղեկությունների համար դիմել armballet@mail.ru էլեկտրոնային հասցեով կամ զանգահարել՝ (010) 56-44-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

«Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են *«Դիլիջանի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Ուսանողական 70, ***մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 17-ին՝ ժամը 16:00-ին,*** Դիլիջանի պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Ուսանողական 70:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 0089-49 հեռախոսահամարով:

էլ. հասցեն՝ dilijanpetqolej@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի *«Աչաջրի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Աչաջրի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Աչաջուր համայնք, 6 փ. 4:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 00-19-40 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի *«Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի մայրենիի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամաբակ գյուղի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Գեղամաբակ, 4-րդ փ., 18 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 84-14-88 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի *«Արգավանդի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (9 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արգավանդ, 1 փ., 17 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 79-94-33 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Քարաբերդի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի համաշխարհային եւ հայոց պատմության (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 4:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Քարաբերդի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Քարաբերդ, փ. 1, շ. 13:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 82-09-12 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Ոսկեհասկի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 4:00-ին,*** ՀՀ Շիրակի մարզի Ոսկեհասկի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 35-20-45 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի աշխարհագրության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 22-ից մինչեւ հոկտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 7-ին՝ ժամը 15:00-ին,*** ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գեղաշեն, 1-ին փ. 83:

